ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ՀՀ ԱԺ և Հանրային Ցանցի Համագործակցության հուշագիր	3-4
Բարձրացնել ՔՀԿ-ների մասնակցությունը և ազդեցությունը որոշումների կայացման գործընթացներին	5-7
Հանրային Ցանցի հաղորդակցության մեխանիզմները	5-20
Քաղաքացիական հասարակության կառույցներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի առկա վիճակը և հիմնախնդիրները	20-22
«Բաց կառավարման գործընկերություն» ՀՀ երկրորդ (2014-2016 թթ.) գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված՝ «Արազա» ԲՀԿ-ի տեսակետն ու առաջարկությունները	23-24
«Բաց կառավարման գործընկերություն» ծրագրի մշակման և իրականացման գործընթացին հանրային մասնակցության մակարդակի գնահատման ընթացքում բացահայտված և ՀՀ երկրորդ (2014-2016 թվականներ) գործողությունների ծրագրի նախագծող աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված՝ ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆԻ առաջարկությունները	24-25
«Բաց կառավարման գործընկերություն» ծրագրի ՀՀ երկրորդ (2014-2016 թվականներ) գործողությունների ծրագրի նախագծող աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված ՔՀԿ համայնքի առաջարկների վերաբերյալ ՀՀ կառավարության պաշտոնական մեկնաբանությունները	25-26
Փորձագետ ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆԻ միջոցով հավաքագրված և աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված ՔՀԿ-ների առաջարկների վերաբերյալ պատասխանները հետևյալն են.	26
Հարցազրույց ՀՀ ԱԺ պատգամավոր ԹԵՎԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ հետ	27-28
Օրենսդրական օրակարգի քննարկման օրեր 2013թ. ՏԱԹԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆ	28-29
Հանրային ցանցի անդամները ԱՄՆ-ում Իռեն Դանիելյան, Արշակ Գասպարյան	29-31
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	32-40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ձայն Ազգային ժողովում» տեղեկագիրը պետական կառույցների հետ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության «Հանրային ցանցի» խոսափողն է, որի միջոցով ցանցը հնարավորություն է ստանում որոշում կայացնողներին հասցնել հասարակության ձայնը՝ վերջինիս շահերի ներկայացման և պաշտպանության նպատակով:

Տեղեկագիրն օժանդակում է Ցանցի լոբբիստական գործունեությանը՝ որոշում ընդունողներին ապահովելով այլընտրանքային տեղեկատվությամբ: Միաժամանակ հանրությանը տեղեկացնում է օրենքների ընդունման գործընթացում հանրային շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների մասնակցության ընթացքի, շահառուների կողմից բարձրացված հիմնահարցերը օրենսդրի ուշադրությանը ներկայացնելու նախաձեռնությունների և դրանց վերաբերյալ վերջիններիս կողմից ընդունված բարեփոխումների մասին:

Տեղեկագրում հրապարակված նյութերն ապահովում են պետական կառույցների հետ համագործակցության շրջանակներում «Հանրային ցանցի», անդամ և գործընկեր կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը, որով փորձ է արվում բարձրացնել վերջիններիս նկատմամբ հանրային վստահությունը:

Տեղեկագրի այս համարում ներկայացվում են նյութեր ցանցի ադմինիստրատիվ կառավարման, անդամների և գործընկերների կարողությունների հզորացման, ինչպես նաև՝ ժողովրդավարական մասնակցային կառավարման ինստիտուցիոնալ համակարգերի բարելավմանն ուղղված նախաձեռնությունների մասին: Ներառված են նաև տեղեկություններ «Հանրային ցանցի» անդամ կազմակերպությունների 2013թ. ընթացքում պետական քաղաքականությունների և օրինաստեղծ գործընթացի մասնակցության շրջանակներում իրականացրած նախաձեռնությունների և մի քանի ոլորտներում ԵՄ-Հայաստան ԵՀՔ 2011-2013թթ. գործողությունների պլանի կատարման ընթացքի վերաբերյալ անցկացրած քննարկումների մասին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միավորում հանդիսացող «Հանրային ցանցի» միջև

Սույն հուշագրով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և «Հանրային ցանց» միավորման մեջ ընդգրկված քաղաքացիական հասարակության ինստիտուտների կազմակերպությունները՝

- կարևորելով երկրում քաղաքացիական հասարակության կառուցման և զարգացման խնդիրները.

- հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների և խմբակցությունների իրավաստեղծ և օրենսդրական գործունեության ընթացքում հանրային և փորձագիտական կարծիքների ու առաջարկությունների ներգրավվման անհրաժեշտությունը.

- ընդունելով համագործակցության ընթացքում «Հանրային ցանցի», դրանում ընդգրկված առանձին կազմակերպությունների անհատական կամ խմբային շահերի հետապնդման անթույլատրելիությունը, ինչպես նաև մշտական հանձնաժողովների և խմբակցությունների հետ համագործակցող կազմակերպությունների գործունեության ազատության և իրավահավասարության ապահովման սկզբունքները.

- առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովման և սոցիալական տարբեր խմբերի շահերի հնարավորինս լայն ներկայացվածության սկզբունքներով.

հինգերորդ գումարման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության ամբողջ ժամանակահատվածի համար ամրագրում են համագործակցության իրենց պատրաստակամությունը հետևյալի շուրջ.

ա. ըստ անհրաժեշտության Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտներին առընչող օրենքների նախագծերի տրամադրում «Հանրային ցանցի» համապատասխան ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին՝ սահմանված ժամկետներում փորձագիտական, խորհրդատվական կարծիքների և հանրային շահերից բխող առաջարկությունների ստացման նպատակով.

բ. ըստ նպատակահարմարության Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախաձեռնությամբ «Հանրային ցանցում» ընդգրկված կազմակերպությունների մասնակցության ապահովում մշտական հանձնաժողովների նիստերին և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում կազմակերպվող խորհրդարանական լսումներին.

գ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրակարգում ընդգրկված հանրային նշանակություն ունեցող այլ հարցերի վերաբերյալ, հասարակական նախաձեռնությունների առաջադրման նպատակով, «Հանրային ցանցի» կամ նրանում ընդգրկված կազմակերպությունների կողմից կազմակերպված քաղաքացիական ֆորումներին, սեմինարներին, կլոր սեղաններին և քննարկումներին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցության ապահովում:

Սույն հուշագրի շրջանակներում նախատեսվող համագործակցությունը չի սահմանափակում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համագործակցությունը «Հանրային ցանցում» չընդգրկված այլ հասարակական կազմակերպությունների հետ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կողմից փորձագիտական և խորհրդատվական կարծիքի ուղարկված օրենքների նախագծերի վերաբերյալ «Հանրային ցանցի» յուրաքանչյուր կազմակերպություն կարող է ներկայացնել իր կողմից կնքված և ստորագրված առանձին կարծիք կամ տեսակետ, եթե «Հանրային ցանցում» իրականացված քննարկումների արդյունքում դրանց շուրջ չկա միասնական տեսակետ:

Համագործակցության ընթացքում «Հանրային ցանցի» կամ դրանում ընդգրկված կազմակերպությունների կողմից ներկայացված բոլոր առաջարկներն ու կարծիքներն ունեն բացառապես խորհրդատվական բնույթ:

Սույն հուշագիրը ստորագրված է 2013թ-ի **հոկտեմբերի** 15-ին Երևանում և գործում է հինգերորդ գումարման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության ընթացքում:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի	«Հանրային ցանցի»
ղեկավար՝	համակարգող/քարտուղար
Գ. Դումանյան	Թ. Աբրահամյան
---	---

Բարձրացնել ՔՀԿ-ների մասնակցությունը և ազդեցությունը որոշումների կայացման գործընթացներին

«Արազա» ԲՀԿ-ն, որպես «Հանրային ցանցի» համակարգող և ադմինիստրատիվ աշխատանքների պատասխանատու, ցանցի ռազմավարական նպատակների կատարմանը նպաստելու համար 2012թ. հոկտեմբերից մինչև 2013թ. հոկտեմբերի վերջը ԱՄՆ Դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացրել է *«Բարձրացնել ՔՀԿ-ների մասնակցությունը և ազդեցությունը ժողովրդավարական որոշումների կայացման գործընթացներին, որպեսզի երաշխավորվի արդար, սոցիալական և տնտեսական զարգացումը Հայաստանում»* ծրագիրը:

Ծրագրի ռազմավարական նպատակն էր՝

Հանրային քաղաքականությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավվածության աստիճանի և ազդեցության աճ՝ ապահովելու համար Հայաստանի սոցիալական և տնտեսական զարգացումը:

Ծրագրի կարճաժամկետ նպատակն էր՝

Բարձրացնել հանրության մասնակցության մակարդակը օրենսդրության վերաբերյալ որոշումների կայացման ժողովրդավարական գործընթացներում ՔՀԿ-ների կարողությունների զարգացման միջոցով, մասնավորապես՝

ա. Արդյունավետ մասնակցություն հանրային քննարկումներին

բ. Արդյունավետ մասնակցություն կառավարական հանձնաժողովներում

գ. Օրենսդրական նախաձեռնությունների պատշաճ ձևակերպում:

Ծրագրի շահառուներն էին ՔՀԿ համայնքի, մասնավորապես՝ պետական կառույցների հետ համագործակցության քաղաքացիական հասարակության ինստիտուտների միավորում հանդիսացող «Հանրային ցանցի» անդամ և գործընկեր կազմակերպությունների երիտասարդ անդամները: Ծրագրի ընթացքում վերջիններիս համար իրականացվել է սեմինարների շարք, որոնց մասնակցել են 73 երիտասարդ մասնագետներ: Սեմինարի նպատակն էր զարգացնել ՔՀԿ ներկայացուցիչների՝ քաղաքականությունների փաստաթղթերի վերլուծության և օրինագծերի մշակման կարողությունները:

Սեմինարների ավարտին վերապատրաստված 28 երիտասարդներ ներգրավվել են Ցանցի աշխատանքներում, որը նոր մոտիվացվածություն է հաղորդել կազմակերպություններին ցանցային աշխատանքներում: Նրանք ներգրավված են ցանցի ինչպես վարչական, այնպես էլ՝ օրենքների նախագծի վերլուծության փորձագիտական աշխա-տանքներում: «Օրենսդրական օրակարգի օր» նախաձեռնության շրջանակներում, 2012թ. համեմատ, 2013թ. սեպտեմբերին քաղաքացիական հասարակության կողմից հավաքագրվել և ԱԺ մշտական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել ավելի մեծ թվով օրենսդրական փոփոխությունների առաջարկներ: Նախորդ տարվա 5 հանձնաժողովի համեմատ այս տարի հավաքագրվել է 8 հանձնաժողով, աճել է նաև առաջարկների թիվը, դրանք ձևակերպման որակը: Առաջարկների մշակման աշխատանքային թիմերում ընդգրկված են եղել երիտասարդ փորձագետներ, որոնցից 5-ը սեմինարի ընթացքում վերապատրաստված մասնագետներ էին:

Այս տարի ընդլայնվել է նաև Ցանցի անդամ հանրային փորձագետների ներգրավվածությունը ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների և նախարարությունների աշխատանքային խմբերում և կոլեգիաներում: ԱԺ պաշտպանության, մարդու իրավունքների, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի հանձնաժողովների հանրային փորձագետների, ինչպես նաև՝ կրթության, աշխատանքի և սոցիալական հարցերի, բնապահպանության, տեղական ինքնակառավարման նախարարությունների կոլեգիաների կազմում Հանրային Ցանցից ընդգրկվել է

10 փորձագետ, որոնք կարողացել են առաջ մղել մի քանի օրենքների նախագծերում փոփոխություններ կատարելու որոշ առաջարկներ:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են կլոր սեղաններ, որոնց շրջանակում մասնակից կազմակերպությունները հնարավորություն են ունեցել քննարկելու Հայաստան ԵՀՔ 2011-2013թթ. գործողությունների պլանի սոցիալ-տնտեսական բարեփոխումների, մարդկային զարգացման, կառավարման ապակենտրոնացմանն ուղղված միջոցառումների ընթացքը: Կլոր սեղաններին հրավիրված են եղել և մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման, կրթության և գիտության, էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, ինչպես նաև՝ Երևանի քաղաքապետարանի ներկայա-ցուցիչներ, ՔՀԿ-ների, կրթական հաստատությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Կլոր սեղաններին մասնակցել են ընդհանուր թվով 8 պաշտոնյա և ՔՀԿ 125 ներկայացուցիչ: Քննարկումների արդյունքում պաշտոնական տեղեկատվության ներկայացման և դրա ազդեցության վերաբերյալ քննարկումների միջոցով բացահայտված բոլոր խնդիրները և դրանց լուծման հնարավոր առաջարկները հավաքագրվել, վերլուծվել, համակարգվել և ներկայացվել են պատկան կառույցներին:

Հետադարձ արձագանք ստացվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից, որը բարձրացված հարցադրումներից անդրադարձել է տեղեկատվության թափանցիկության և մատչելիության խնդրին և տեղեկացրել, որ նախարարության կայքը հարստացվել է նոր տեղեկատվությամբ, ապահովված է բաժանորդագրության սկզբունքով տեղեկատվություն ստանալու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, նշվել է, որ կլոր սեղան-քննարկումների մասին տեղեկատվությունը տպագրվել է նախարարության ամսագրի հերթական համարում:

Արձագանքել է նաև ՏԵՄՊՈՒՍ ծրագրի հայաստանյան գրասենյակի տնօրենությունը, որը ևս նշել է, որ քննարկման ամփոփագիրը տեղադրվել է իրենց կայքում և ամսագրում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է 4 հանրային քննարկում, որոնց մասնակցել է ՔՀԿ 211 ներկայացուցիչ, ովքեր հնարավորություն են ունեցել սոցիալական ոլորտի 2 օրենքները մշակողներից լսել ոլորտում կատարվող օրենսդրական բարեփոխումների մասին, վերջիններիս հետ քննարկել նախագծերում առկա բացերով պայմանավորված՝ բնակչության սոցիալական անպաշտպանվածության ռիսկերը:

Քննարկման ընթացքում բարձրաձայնված դիտողություններն ու առաջարկներն ամփոփվել ու ներկայացվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱԺ քննարկմանը:

Ցանցի անդամ և գործընկեր կազմակերպությունների շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացրել նաև՝ «Բաց կառավարման գործընկերությունների ծրագրի» նախագծման և կատարման գործընթացի մասնակցային մակարդակի բարելավում» և «ՀՀ-ում արտագաղթի նվազեցմանն ուղղված քաղաքականության բարելավում» թեմաներով հանրային քննարկումները: Քննարկումների արդյունքում «Արազա» կազմակերպությունը հրավիրվել է «Բաց կառավարման գործընկերություն» ՀՀ երկրորդ (2014-2016 թթ.) գործողությունների ծրագրի նախագծի աշխատանքային նիստի քննարկմանը և հնարավորություն ստացել ներկայացնել առաջարկներ, որոնք քննարկման առարկա են դարձել՝ նախագծում ներառելու նպատակով:

Ծրագրի իրականացման արդյունքում ցանցի անդամ երկու կազմակերպության երիտա-սարդ մասնագետներ՝ Իռեն Դանիելյանը և Արշակ Գասպարյանը, ովքեր ակտիվ ներգրավված էին ծրագրի բոլոր փուլերում, որոշեցին ավելի լուրջ փորձառություն ձեռքբերելու և Ցանցում իրենց մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դիմել և մասնակցել օրենսդրական ոլորտի մասնագետների ծրագրի վերապատրաստմանը (Professional Fellows Program/PFP):

Ծրագրի իրականացման արդյունքում փաստվեց, որ անգամ շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններից շատերը իրենց գործունեությունն արդյունավետ իրականացնելու առումով ունենին շահերի պաշտպանության կարողությունների հզորացման և պրակտիկ փորձառության կարիք: Ակնառու դարձավ նաև կառավարության կողմից իրականացվող միջազգային ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության մեծ բացը, ուստի, գնահատելով ծրագրի արդյունքներն ու ազդեցությունը, կարող ենք եզրակացնել, որ մեր կողմից ընտրված նպատակը, խնդիրները և թեմաներն, իսկապես, պահանջարկ ունեին և թողեցին իրենց դրական ազդեցությունը ՔՀԿ համայնքի մոտիվացման և հետագա գործունեության ուղղությունների հստակեցման առումով:

Գտնում ենք, որ ծրագրի հաջողությունը պայմանավորված է նրանով, որ Ցանցի ռազմավարությունը մշակելիս Ցանցի կարողությունների և իրավիճակի գնահատումը ճիշտ է կատարվել և իրապես հիմնված է եղել հարցման մասնակիցների կարիքի վրա: Դա խոսում է Ցանցի խորհրդի և ներգրավված խորհրդատուների մասնագիտական բարձր կարողությունների և փորձառության մասին, ովքեր ճշգրտորեն են պլանավորել ռազմավարության առաջնահերթություններն ու գործողությունների պլանը: Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ Դեսպանատունը՝ ի դեմս Փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի հանձնաժողովի, կարևորել է մեր ներկայացրած ծրագրային առաջարկը և հնարավորություն ընձեռել լուծելու մեր առջև ծառացած խնդիրները:

Հանրային Ցանցի հաղորդակցության առկա գործիքների արդյունավետության և բարելավման կարիքի գնահատման արդյունքները

Հետազոտության հիմնախնդիրը

«Հանրային ցանցի» անդամ կազմակերպությունները 154 են, սակայն ոչ բոլորն են ֆիզիկապես կամ առցանց ակտիվ մասնակցում Ցանցի գործունեությանը: Այս եզրակացության համար հիմք են ծառայել Ցանցի գործունեության մեջ անդամ կազմակերպությունների ներգրավվածության աստիճանի և քարտուղարության հետ տեղեկատվության կառավարման՝ 2012 և 2013թթ. վիճակագրական տվյալների վերլուծությունը, թեպետ, ուսումնասիրությունը վկայում է, որ վերջիններս մասնակցության առումով պատրաստակամ են ու տեղեկացված տարբեր ոլորտներում իրականացվող քննարկումների, շահերի պաշտպանության քարոզարշավների, միջոցառումների մասին: Պասիվ մասնակցության խնդրի պատճառներից է մասնակցության մատչելիությունը, չնայած՝ քարտուղարությունը փորձել է մասնակցության համար ստեղծել նաև տեղեկատվության կառավարման առցանց հաղորդակցության միջոցներ: Դրանք, սակայն բավարար չեն օգտագործվում, մասնավորապես՝ Ցանցի կայքում անդամ կազմակերպությունների մասին տեղեկատվության ներկայացման, Ցանցի անդամ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի և միջոցառումների մասին տեղեկատվություն տարածելու, բլոգում օրինագծերի շուրջ տեսակետներ տեղադրելու հարթակների շրջանակում: Ցածր է նաև էլեկտրոնային փոստով աշխատանքի կազմակերպման մշակույթը:

Այս խնդիրը ծնող պատճառները հասկանալու և համապատասխան միջոցներ ձեռնար-կելու համար «Հանրային ցանցի» քարտուղար «Արազա» ԲՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպության սոցիոլոգը և միջազգային CIM փորձագետը պատվեր են ստացել գնահատել «Հանրային ցանցի» կոմունիկացիոն համակարգը՝ հաշվի առնելով նաև դրանց վերաբերյալ ցանցի անդամ կազմակերպությունների տեսակետները՝ պարզելու համար ինչ խնդիրներ, թերություններ կան, որոնք խոչընդոտում են եղած միջոցներով արդյունավետ աշխատանքին և ինչ առաջարկություններ կարելի է մշակել դրանք հաղթահարելու համար:

Հետազոտության նպատակը

Նպաստել «Հանրային ցանցի» գործունեությանն անդամ կազմակերպությունների ակտիվ և արդյունավետ մասնակցությանը՝ տեղեկատվական կոմունիկացիոն համակարգի բարելավման միջոցով:

Հետազոտության խնդիրները

- Գնահատել Հանրային ցանցի անդամ կազմակերպությունների կողմից Ցանցի գործունեության մասնակցության շրջանակներում տեղեկատվական կոմունիկացիոն
- Համակարգի կիրառման մակարդակը,
- Բացահայտել Հանրային ցանցի քարտուղարի հետ անդամ կազմակերպություն-ների կիրառվող գործիքները

Ընտրանք

Հետազոտության համար կիրառվել է հարցվողների պատահական ընտրանքի մեթոդը: Նախապես ունենալով Հանրային ցանցի անդամ 154 կազմակերպությունների ցուցակը և կոնտակտային տվյալները՝ ընտրվել է ամեն հինգերորդը, որպեսզի ընտրված կազմակերպությունները լինեն ներկայացուցչական՝ կազմակերպությունների ընդհանուր քանակի նկատմամբ:

Այնուհետև հարցաշարերը էլեկտրոնային եղանակով ուղարկվել են այդ 31 կազմակերպություն-ներին:

Մեթոդական մաս

1. Որպես հետազոտության հիմնական մեթոդ ընտրվել է փակ հարցաշարով հարցումը, մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով հարցաշարերը ուղարկվել են ցուցակից ընտրված կազմակերպություններին:
2. Հետագայում, որպես երկրորդային փուլ, ընտրվել է հարցման մեկ այլ տեսակ՝ հեռախոսային հարցումը, քանի որ էլեկտրոնային եղանակով պատասխանել էր ընդամենը 30%-ը: Հեռախոսային հարցման միջոցով հնարավորություն է տրվում պարզելու ոչ միայն հարցերի պատասխանները, այլ նաև՝ խորանալու պատճառների մեջ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտության նպատակն էր նպաստել Հանրային ցանցի անդամ կազմակերպու-թյունների ակտիվ և արդյունավետ մասնակցությանը՝ տեղեկատվական կոմունիկացիոն համակարգի բարելավման միջոցով:

Հետազոտության արդյունքում վեր են հանվել տեղեկատվական կոմունիկացիոն համակարգի առկա խնդիրները և մշակվել են որոշակի առաջարկություններ Հանրային ցանցի անդամ կազմակերպությունների միջև հաղորդակցության համակարգի բարելավման համար:

Որպես հետազոտության հիմնական գործիք օգտագործվել են ցանցի քարտուղարության կողմից ներկայացված վիճակագրական տվյալները, հարցաշարը, որն էլեկտրոնային հասցեների միջոցով ուղարկվել է նախապես որոշակի չափանիշների հիման վրա ընտրված՝ Ցանցի անդամ կազմակերպություններին:

Հարցաշարը ուղարկելով Ցանցի անդամ կազմակերպություններից ամեն 5-րդին՝ կազմվել է ընտրանքային համախմբություն, որը ներկայացուցչական է Հանրային ցանցի բոլոր անդամ կազմակերպությունների նկատմամբ:

Հետազոտության սկզբնական փուլում ընդամենը 10-ը կամ 30%-ն է արձագանքել՝ էլեկտրոնային եղանակով ետ ուղարկելով լրացված հարցաթերթերը:

Համաձայն Ցանցի քարտուղարության կողմից տրամադրված վիճակագրական տեղեկատվության՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման պարագայում հետադարձ կապի վիճակագրությունը 2012-2013թթ.-ին կազմել է 20-40%: Հետաքրքրվածության մակարդակը մեծապես պայմանավորված է եղել տեղեկատվության թեմայից և ոլորտից: Հարցումը տեղեկատվության փոխանակման այն տեսակի մեջ է մտնում, որը սովորաբար, ցանցի անդամ կազմակերպությունների կողմից արժանացել է ամենաքիչ հետաքրքրությանը:

Համաձայն նույն աղբյուրի՝ Ցանցի անդամ կազմակերպությունների մասնակցությունը օրենքների ընդունման գործընթացներին 2012թ. ընթացքում եղել է հետևյալ կերպ.

N	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները	Խորհրդարանական լսումների թիվը	Հանձնաժողովների նիստերի թիվը	Հանրային լսումների թիվը	Մասնակիցների թիվը
1	Առողջապահության, մայրության և մանկության	1	2	1	80-100
2	Արտաքին հարաբերությունների				
3	Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի	1	4		20
4	Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի		2		8
5	Եվրոպական ինտեգրացման				
6	Մարդու իրավունքների պաշտպանության հանրային հարցերի	3	3	2	80-100
7	Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի				
8	Պետական-իրավական (պետաիրավական)		4		20
9	Սոցիալական հարցերի		3	2	100-130
10	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման	1	3		15-25
11	Տնտեսական				
12	Ֆինանսավարկային և բյուջետային		1	1	65

Նույն գործընթացներին 2013թ. առաջին կիսամյակի ընթացքում արձանագրվել է հետևյալ պատկերը.

հ/հ	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները	Խորհրդարանական լսումների թիվը	Հանձնաժողովների նիստերի թիվը	Հանրային լսումների թիվ	Մասնակիցների թիվ
1	Առողջապահության, մայրության և մանկության	1		2	80-100
2	Արտաքին հարաբերություններ				
3	Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի			1	80
4	Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի				
5	Եվրոպական ինտեգրացման				
6	Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի	1	2		40-50
7	Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի	2	3		25-40
8	Պետական, իրավական (պետաիրավական)		1		20
9	Սոցիալական հարցերի			3	180-200
10	Տարածքային կարգավորման և տեղական ինքնակառավարման				
11	Տնտեսական				
12	Ֆինանսավարկային և բյուջետային			1	30-40

Քանի որ էլեկտրոնային եղանակով հարցման պատասխաններից հետո հարցվողների դեռ 70% չէր պատասխանել հարցաթերթերին, երկրորդ փուլում հարցումը շարունակվեց հեռախոսային զանգերի միջոցով: Այս փուլի արդյունքում նախ բացահայտվեցին այն պատճառները, թե ինչու չէին հետ ուղարկել լրացված հարցաշարը էլեկտրոնային եղանակով. կազմակերպությունների ղեկավարները էլեկտրոնային եղանակով հարցաշարը չուղարկելու հիմնական պատճառ նշել

են այն, որ աշխատողներն են ստուգում փոստը և, երևի, չեն տեղեկացրել, զբաղված են եղել և ժամանակը չի բավարարել, ուղարկված նամակը սպամում է հայտնվել, Հայաստանում չեն եղել և չեն կարողացել հաճախակի ստուգել էլ.փոստը և այլն:

Ընդհանուր պատկերը ներկայացնում ենք ստորև.



	Պատասխանի տարբերակներ	պատ. թիվ	%
1	Աշխատողներն են ստուգում, ժամանակ չի եղել, որ պատասխանեմ	5	35.7
2	Սպամում է հայտնվել, չեմ նկատել նամակը	4	28.5
3	Հայաստանում չեմ լինում, դրա համար շատ հազվադեպ եմ ստուգում	3	21.4
4	էլ. հասցեն փոխվել է, չեմ ստացել	1	7.1
5	Համակարգիչը չեր աշխատում	1	7.1

Հեռախոսային հարցման միջոցով հնարավոր եղավ ստանալ մյուս 50%-ի պատասխանները: Իսկ մնացած 20%-ը (5 կազմակերպություն) հարցման ընթացքում նույնիսկ հեռախոսով անհասանելի էին: Վերջիններիս հետ հարցաթերթիկները լրացնելու համար անհատական այցեր իրականացվեցին, այդ թվում՝ մարզային գործընկեր կազմակերպությունների օգնությամբ: Այսպիսով, ևս 7 կազմակերպության հարցաշար լրացվեց, ինչպես նաև՝ ճշտվեց, որ 7 կազմակերպություններ այլևս չեն գործում: Ուստի ցանցն այս պահին ունի 147 անդամ:

Հավաքագրված տվյալների համաձայն՝ թարմացվել է ցանցի տվյալների բազան, իսկ հարցաշարի հավաքագրված տվյալները մուտքագրվել և վերլուծվել են ըստ ստացված 31 հարցաթերթերի պատասխանների:

Ըստ լրացված հարցաթերթիկների պատասխանների արդյունքների՝ ստացվել է հետևյալ համայնապատկերը.

1. *Ձեր կազմակերպությունն ունի՞ սեփական համակարգիչ*

Պատասխանի տարբերակներ	%
Այո	83.3
Ոչ	16.7
Ընդ.	100

Ինչպես տեսնում ենք տվյալներից, հարցված կազմակերպությունների մեծ մասը՝ 83,3%-ն ունի սեփական համակարգիչ և միայն 16,7-ն է, որ չունի:



2. *Եթե ոչ, ապա ինչպե՞ս եք միանում ինտերնետին*

Պատասխանի տարբերակներ	%
Անձնական համակարգիչ	75
Ինտերնետ-սրճարան	25
Ընդ.	100

Այն կազմակերպությունները, որոնք չունեն սեփական համակարգիչ, ինտերնետին հիմնականում միանում են անձնական համակարգչի միջոցով՝ 75%, իսկ 25%—ը՝ ինտերնետ-սրճարաններից:



3. *Ունե՞ք էլեկտրոնային հասցե*

Պատասխանի տարբերակներ	%
Այո	100,0
Ոչ	0

Հարցվածներից բոլորն ունեն էլեկտրոնային հասցեներ, որոնք նշված են հանրային ցանցի տվյալների բազայում, սակայն նրանց 7%-ի հասցեները փոխվել են, ինչի մասին մոռացել են տեղեկացնել քարտուղարությանը:

4. *Հարց 4-ին պատասխաններ չեն տրվել, որովհետև այս հարցը պետք է տրվեր Հարց 3-ի բացասական պատասխանի դեպքում, իսկ բացասական պատասխաններ չեն եղել:*

5. *Որքա՞ն հաճախ եք ստուգում Ձեր էլեկտրոնային հասցեն շաբաթվա ընթացքում*

Պատասխանի տարբերակներ	%
Ամեն օր	75,0
Շաբաթը 3-4 անգամ	12,5
Շաբաթը 1-2 անգամ	4,2
Ոչ ամեն շաբաթ	8,3
Ընդ.	100



Պարզվում է, որ հարցվածների մեծ մասն իր էլեկտրոնային հասցեն ստուգում է ամեն օր (75%), մինչդեռ էլեկտրոնային հարցաթերթիկին պատասխանել էր հարցվածների 30%-ը, սա կարող է նշանակել, որ ստացված տեղեկատվության հանդեպ ունեն ընտրանքային մոտեցում: էլեկտրոնային փոստի ոչ հաճախակի ստուգողները կազմում են ցանցի անդամների 25%-ը, ինչը նշանակում է, որ վերջիններիս իրազեկվածության մակարդակը ցածր է, ինչը, բնականաբար, ցանցի գործունեության շրջանակներում կդրսևորվի ակտիվության ցածր մակարդակով:

6. *Ի՞նչ տեսակի տեղեկատվություն եք ստանում Հանրային ցանցից*

	Պատասխանի տարբերակներ	%
1	Օրենսդրական նախագծեր	95,8
2	ԱԺ-ի և կառավարության օրինաստեղծ գործընթացի օրակարգերը	95,8
3	Խորհրդարանական լսումների, հանրային քննարկումների հրավերներ	83,3
4	Աշխատանքային, խորհրդի նիստերի հանդիպումների հրավերներ և դրանց արձանագրությունները	58,3
5	Օրենքների նախագծերի հանրային փորձաքննության եզրակացություններ, և առաջարկների նյութերը	54.2
6	Դոնոր կազմակերպությունների հայտարարություններ, կոնտակտային տվյալներ	2.8
7	Հրապարակումներ	12.5
8	Ցանցի գործընկեր այլ կազմակերպությունների միջոցառումների և դրանց արդյունքների մասին տեղեկատվություն	8.3



Տվյալները բաշխված են ըստ տրված պատասխանների հաճախականության: Ինչպես ցույց են տալիս տվյալները, հարցմանը մասնակցած կազմակերպություններն ավելի հաճախ Հանրային ցանցից ստանում են տեղեկատվություն օրենսդրական նախագծերի, ԱԺ-ի և կառավարության օրինաստեղծ գործընթացի օրակարգերի, խորհրդարանական լսումների, հանրային քննար-

կումների, աշխատանքային խմբերի և ցանցի խորհրդի նիստերի հանդիպումների հրավերներ և դրանց արձանագրությունները, իսկ դոնոր կազմակերպությունների հայտարարությունների և կոնտակտային տվյալների, հրապարակումների, ցանցի գործընկեր այլ կազմակերպություն-ների միջոցառումների և դրանց արդյունքների մասին տեղեկատվություն ստանալու մասին քչերն են նշել, հիմնականում նշվել է, որ որևէ տեղեկատվություն չեն ստանում:

7. Ստացված տեղեկատվությունից ո՞րն եք բացում կարդալու համար

	Պատասխանի տարբերակներ	%
1	Օրենսդրական նախագծեր	91,7
2	ԱԺ-ի և կառավարության օրինաստեղծ գործընթացի օրակարգերը	87,5
3	Խորհրդարանական լսումների, հանրային քննարկումների հրավերներ	83,3
4	Աշխատանքային, խորհրդի նիստերի հանդիպումների հրավերներ և դրանց արձանագրությունները	62,5
5	Օրենքների նախագծերի հանրային փորձաքննության եզրակացություններ և առաջարկների նյութերը	41,7
6	Դոնոր կազմակերպությունների հայտարարություններ կոնտակտային տվյալներ	20,8
7	Հրապարակումներ	16,7
8	Ցանցի գործընկեր այլ կազմակերպությունների միջոցառումների և դրանց արդյունքների մասին տեղեկատվություն	8,3



Հարցման պատասխանների համաձայն ստացված տեղեկատվության տեսականու համապա-տասխանությամբ, մոտավորապես նույն հաճախականությամբ բաշխվել է հետաքրքրվածու-թյան մակարդակը նաև այն տեղեկատվության առումով, որը հարցված կազմակերպությունները բացում են կարդալու համար: Հարցման մասնակիցները ավելի հաճախակի կարդում են ԱԺ-ի մասին տեղեկատվությունը, այնուհետև օրենսդրական նախագծերը, հրավերները, հանդիպումները որոնք վերաբերում են լսումներին կամ հանրային քննարկումներին: Իսկ օրենքների նախագծերի հանրային փորձաքննության եզրակացությունների և առաջարկների նյութերը, դոնոր կազմակերպությունների հայտարարությունները, կոնտակտները, հրապարա-կումների մասին ինֆորմացիան կարդում են նրանք, ովքեր միաժամանակ նշել են, որ ստանում են Հանրային ցանցից նման տեղեկատվություն: Ինչից կարելի է ենթադրել, որ տեղեկատվու-թյունը ոչ թե չի տրամադրվում, այլ չընթերցվելու հետևանքով որպես այդպիսին չի ընկալվում:

8. *Այլ կազմակերպություններից ստացված տեղեկատվություններից ո՞րն եք համարում օգտակար կարդալու համար:*

Պատասխանի տարբերակներ	%
Ոլորտային ծրագրեր	45.8
Դրամաշնորհներ, միջազգային ծրագրեր	29.2
Օրենսդրական նախաձեռնություններ	20.8
Հանդիպումներ	16.7
Հետազոտություններ	16.7
Միջոցառումներ	12.5
ՔՀԿ-ներ	4.2
Չեն ստանում	33.3

Ինչպես ցույց է տալիս գրաֆիկը՝ ցանցի անդամները այլ ցանցերից, կազմակերպություններից ավելի հաճախ ստանում են տեղեկատվություն ոլորտային ծրագրերի՝ 45.8%, դրա-մաշնորհների 29.2%, օրենսդրական նախաձեռնությունների մասին, և միայն քիչ մասն է՝ 16.7%, որ ստանում է տեղեկատվություն նաև հանդիպումների, միջոցառումների, հետազոտությունների մասին՝ 12.5%: Տեղեկատվության այս բոլոր ձևերը, որոնք նշվել են հարցված կազմակերպությունների կողմից, համարվում են օգտակար կարդալու համար:



9. *Դուք գիտե՞ք Հանրային ցանցի կայքը*

Պատասխանի տարբերակներ	%
Այո	58,3
Ոչ	41,7
Ընդ.	100

Տվյալները ցույց են տալիս, որ հարցված կազմակերպություններից կեսից ավելին՝ 58.3%-ը, գիտի Հանրային ցանցի կայքի մասին, իսկ 41,7%-ը՝ ոչ, մինչդեռ այն պարունակում է բավական մեծածավալ տեղեկատվություն հենց այն թեմաների մասին, որը հետաքրքրում է հարցման մասնակիցներին և, որից, փաստորեն, վերջիններիս չեն օգտվում:



10. *Եթե ոչ, ապա ինչու՞*

Պատասխանի տարբերակներ	%
Մենք չենք տեղեկացվել	40,0
Չգիտենք հասցեն	60,0
Ընդ.	100

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Հանրային ցանցի կայքի մասին չիմանալու պատճառներից ավելի հաճախ նշվել է այն, որ «չգիտեն հասցեն» 60%, իսկ 40%-ը նշել է, որ «չեն տեղեկացվել» կայքի գոյության մասին: Այս պատասխանը հիմք է տալիս ենթադրել, որ Ցանցի անդամների նույն 40%-ը կամ չի ստանում ցանցի մասին պարբերաբար հրատարակվող և տարածվող տեղեկատվական թերթիկները և «Հանրային ձայն ազգային ժողովում» տեղեկագրի համարները կամ դրանք չի ընթերցում, քանի որ դրանցում առկա է կայքի հասցեն:



11. Եթե այո, ապա որքա՞ն հաճախ եք ստուգում Հանրային ցանցի կայքը

Պատասխանի տարբերակներ	%
Ամեն օր	7,1
Շաբաթը 1-2 անգամ	28,6
Շաբաթը մեկ անգամից քիչ	64,3
Ընդ.	100

Ինչպես երևում է աղյուսակից, այն 62%-ից, որոնք տեղյակ են Ցանցի կայքի մասին, մեծ մասը՝ 64.3%-ը շաբաթը մեկ անգամից քիչ է օգտվում կայքից, 28.6%-ը օգտվում է 1-2 անգամ, և միայն 7% է, որ ամեն օր օգտվում է կայքից:



12. *Ինչպիսի ինֆորմացիա եք փնտրում Հանրային ցանցի կայքում:*

	Պատասխանի տարբերակներ	%
1	Օրենսդրական նախաձեռնություններ	37.5
2	ՔՀԿ տեղեկատվություն	25
3	Հանդիպում, միջոցառում	25
4	Ոլորտային ծրագրեր	8.3
5	Ոչ մի բան	12.5



Ինչպես ցույց են տալիս տվյալները, հարցվածների այն մասը, որոնք տեղյակ են Հանրային ցանցի կայքից, հիմնականում փնտրում են հետևյալ տեսակի տեղեկատվություն՝ օրենսդրական նախաձեռնություններ, որի մեջ մտնում են օրենքի նախագծերը, ԱԺ որոշումները, ինֆորմացիա ՔՀԿ-ներից՝ նրանց կողմից իրականացված և իրականացվող ծրագրերի մասին, հանդիպումների և միջոցառումների մասին տեղեկատվություն, ոլորտային ծրագրերի մասին տեղեկատվություն, իսկ 12.5%-ը պատասխանել է, որ ոչինչ չի փնտրում Հանրային ցանցի կայքում:

13. *Ինչպիսի՞ ինֆորմացիա կցանկանաք տեսնել Հանրային ցանցի կայքում*

	Պատասխանի տարբերակներ	%
1	ՀԿ-ներ/նաև մարզային	29.2
2	ՔՀԿ-ի տեսակետներ	25
3	Դիտարկումներ նախագծերի վերաբերյալ	25
4	Ոլորտային ծրագրեր	16.7
5	Միջազգային կառույցների ծրագրեր	12.5



Արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածները ավելի շատ նախընտրում են Հանրային ցանցի կայքում տեսնել տեղեկատվություն հետևյալ կատեգորիաների մասին.

- ՀԿ-ների կարգավիճակի, գործունեության ուղղության, որպեսզի առավել պարզ լինի, թե որ ՀԿ-ն ինչ խնդիրներ է լուծում, ինչ ուղղվածություն ունի: Ընդ որում, այստեղ կարևոր է նշել, որ հարցվածները նախընտրում են նաև կայքում տեսնել մարզային ՀԿ-ների մասին տեղեկատվություն՝ 12.5%:
- 25%-ը նշել է օրենքների նախագծերի վերաբերյալ ՔՀԿ-ների դիտարկումների և առաջարկների առկայության կարիքը կայքում, որպեսզի ապահովվի ինտերակտիվ կապ:

- 25%-ը նշել է հայտարարվող դրամաշնորհների մասին տեղեկատվության տեղադրումը կայքում, որպեսզի ՀԿ-ները հնարավորություն ունենան մասնակցելու այդ ծրագրերի մրցույթներին:
- 16.7%-ը նշել է նաև իրականացվող ոլորտային ծրագրերը, որը թույլ կտա ՀԿ-ներին, ըստ իրենց ոլորտային ուղղվածության, տեղեկացված լինել և օգտվել դրանցից:
- 12.5%-ը նշել է միջազգային ծրագրերի մասին տեղեկատվության առկայության կարիքը կայքում, քանի որ ՀԿ-ները ցանկություն ունեն նաև կապեր հաստատելու, տեղեկանալու միջազգային դոնորների և նրանց ծրագրերի մասին:

14. Որքան հաճա՞խ եք օգտվում Հանրային ցանցի կայքի բլոգ բաժնից

Պատասխանի տարբերակներ	%
Միայն մեկ անգամ	21,4
Երբեք	78,6
Ընդ.	100

Ինչպես ցույց են տալիս տվյալները, Հանրային ցանցի կայքի մասին տեղյակ կազմակերպությունների մեծ մասը Հանրային ցանցի կայքի բլոգ բաժնից երբեք չի օգտվել, իսկ քիչ տոկոսն օգտվել է մեկ անգամ:



15. Եթե երբեք, որո՞նք են չօգտագործելու պատճառները



Պատասխանի տարբերակներ	%
Ինձ դուր չի գալիս բլոգը	18.2
Ես չգիտեմ այդ բլոգի մասին	27,3
Թեմաները հետաքրքիր չեն ինձ համար	9,1
Ժամանակ չեմ ունեցել	18,2
Առիթ չի եղել	9,1
Ես կապի մեջ եմ հեռախոսով	9,1
Բլոգը ակտիվ չէ	9,1
Ընդ.	100

Գրաֆիկից երևում է, որ հարցվածների այն մասը, որոնք չեն օգտվում Հանրային ցանցի բլոգ բաժնից, որպես չօգտագործելու պատճառ նշել են, որ չգիտեն այդ բլոգի մասին, դուր չի գալիս բլոգը կամ ժամանակ չեն ունեցել: Իսկ մնացած մասը նշել է, որ առիթ չի եղել կամ կապի մեջ են հեռախոսի միջոցով:

16. Որքա՞ն հաճախ եք սեփական գաղափարները կամ նյութը տեղադրել կայքում



Պատասխանի տարբերակներ	%
3 անգամից շատ	7,1
Միայն մեկ անգամ	21,4
Երբեք	71,4
Ընդ.	100

Ցանցի անդամների 28,5%-ը առնվազն մեկ անգամ տեղադրել է սեփական գաղափարները կայքում, որոնցից՝ 21.4%-ը միայն մեկ անգամ, իսկ 7,1%-ը՝ 3 անգամից շատ: Մեծ մասը՝ 71,4%-ը երբեք որևէ գաղափար չի տեղադրել բլոգում, քանի որ ընդհանրապես չի օգտվել

կայքի բլոգ էջից: Այս հարցի պատասխանը հուշում է, որ Ցանցի հիմնական անդամները միջին և բարձր տարիքի մարդիք են, որոնք նախընտրում են հաղորդակցման տրադիցիոն գործիքները և չունեն բավարար հմտություններ կամ ցանկություն օգտվելու ժամանակակից գործիքներից:

17. *Եթե երբեք, ապա որո՞նք են պատճառները*

Որպես հիմնական պատճառ մեծամասնությունը՝ 40%-ը նշել են, որ անհրաժեշտություն չի եղել, կամ էլ չեն մտածել, որ իրենց գաղափարները կարող են քննարկվել կայքում: Եվ այս միտումը հիմնականում կարելի է կապել նրա հետ, որ անդամ կազմակերպությունները բանավոր են շփվում ցանցի քարտուղարի՝ Թամարա Աբրահամյանի հետ, ինչի մասին հենց վկայում է հաջորդ 30%-ի պատասխանը այն մասին, որ բանավոր կիսվում են ցանցի համակարգողի հետ: Որպես այլ պատճառ նշել են ժամանակ չունենալը, իսկ 10%-ը պատասխանել է, որ չգիտի, թե ինչ ինֆորմացիա կարող է տեղադրել: Փաստորեն, բլոգում տեսակետ ներկայացնելու կամ քննարկելու անհարժեշտություն չունեցող կազմակերպությունները կա՞մ Ցանցի համակարգողի հետ տրադիցիոն հաղորդակցման միջոցներով հաղորդակցվողներն են և գուցե չեն տիրապետում բլոգի գործածման տեխնիկական հմտություններին, կա՞մ սեփական մտքերը վերլուծական, քաղաքականությունների կամ օրինագծերի նախագծերի ձևաչափով ներկայացնելու սահմանափակ կարողություն ունեցողներն են:



Պատասխանի տարբերակներ	%
Ես չգիտեմ, թե ինչ ինֆորմացիա եմ տեղադրելու կայքում	10
Ժամանակի պակաս	20
Բանավոր կիսվում եմ Ցանցի համակարգողի հետ	30
Անհրաժեշտություն չի եղել	40
Ընդ.	100

18. *Հաղորդակցման ինչ գործիքներ կառաջարկեք մեզ, որի միջոցով քարտուղարությունը կարող է փոխանցել հետևյալ ինֆորմացիան:*

1. Հանդիպումներ

Ինչպես երևում է աղյուսակներից, հանդիպումների մասին ինֆորմացիան հարցվածների մեծ մասը նախընտրում է ստանալ էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ որպես այլընտրանք՝ մեծ մասը նշել է Ֆեյսբուք սոցիալական ցանցը (90,9%) և Ցանցի կայքը (66,7%): Իսկ 33,3%-ը նախընտրել է նաև SMS հաղորդագրության միջոցով ստանալ հանդիպումների մասին տեղեկատվությունը:

1.	%	2.	%	3.	%
էլ. փոստ	100	Facebook	90,9	Կայք	66,7
		Կայք	9,1	SMS	33,3
Ընդ.	100	Ընդ.	100	Ընդ.	100

2. Կոնֆերանսներ

Կոնֆերանսների մասին տեղեկանալու գործիք մեծ մասը նախընտրում էլ.փոստը, որպես այլընտրանք՝ 81,8%-ը նշել է Ֆեյսբուքը, իսկ 33,3%-ը նշել են կայք, սկայպ և SMS տարբերակները:

1	%	2	%	3	%
էլ.փոստ	95,8	Facebook	81,8	Կայք	33,3
Skype	4,2	Կայք	18,2	Skype	33,3
Ընդ.	100	Ընդ.	100	SMS	33,3
				Ընդ.	100

3. Դիտողություններ, կարծիքներ

1	%	2	%	3	%
էլ.փոստ	100	Facebook	90	Կայք	8.3
		Կայք	10	SMS	
		Ընդ.	100	Ընդ.	

Կարծիքների ներկայացման համար, որպես առաջնային գործիք, հիմնականում նախընտրում են էլ.փոստը, որպես այլընտրանք՝ 90%-ը նշել է Ֆեյսբուքը, 10%-ը՝ Ցանցի կայքը:

4. Օրինագծեր

1	%	2	%	3	%
էլ.փոստ	100	Facebook	90	Կայք	8.3
		Կայք	10		
		Ընդ.	100		

Օրինագծերի մասին տեղեկատվությունը մեծամասամբ նախընտրում են ստանալ էլ.փոստի միջոցով, 90%-ը՝ Ֆեյսբուքի և միայն 10%-ը կայքի միջոցով:

Փաստորեն, աղյուսակների տվյալներից պարզ է դառնում, որ որպես հաղորդակցության հիմնական գործիք կազմակերպությունները ավելի շատ նախընտրում են էլեկտրոնային փոստը, որպես երկրորդային գործիք կամ այլընտրանք՝ Ֆեյսբուք սոցցանցը և Ցանցի կայքը: Միայն կոնֆերանսների դեպքում է, որ որոշակի չափով նախընտրելի է նաև հաղորդագրության և սկայպի տարբերակը:

19. Դուք փոխել եք Ձեր կոնտակտային տվյալները

Պատասխանի տարբերակներ	%
Այո	16,7
Ոչ	83,3
Ընդ.	100

Տվյալները ցույց են տալիս, որ հարցված կազմակերպությունների մեծ մասը (83,3%) չի փոխել իր կոնտակտային տվյալները, և միայն 16,7%-ն է, որ փոխել է: Սա միանգամայն ողջամիտ վարքագիծ է Ցանցի անդամ կազմակերպությունների համար, քանի որ փաստորեն, նրանց հիմնական մասը էլեկտրոնային փոստը դիտարկում են որպես հաղորդակցության հիմնական միջոց:



20. Դուք տեղեկացրե՞լ եք Հանրային ցանցի քարտուղարությանը էլ.փոստի փոփոխության մասին

	%
Այո	100

Ինչպես երևում է աղյուսակից, այն 16,7%-ը, որը փոխել է կոնտակտային տվյալները, տեղեկացրել է այդ փոփոխության մասին Ցանցի քարտուղարությանը:

21. *Եթե այո, ի՞նչ գործիքի միջոցով*

	%
Հեռախոս	16.7

Հիմնականում որպես գործիք, որի միջոցով Ցանցի կազմակերպությունները տեղեկացնում են փոփոխության մասին, համարվում է հեռախոսակապը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոմունիկացիոն համակարգերի վերաբերյալ եզրակացություններ:

- Ցանցի անդամ կազմակերպությունների մոբիլիզացումը աշխատում է, մասնավորապես՝ անդամները հաճախում են սեմինարների, կոնֆերանսների և այլ միջոցառումների բավականին ներկայացուցչական քանակով: Այն գործիքները, որոնք օգտագործում է Ցանցի քարտուղարությունը, լավ են աշխատում:
- Բանավոր հաղորդակցությունը/հեռախոս, ժողովներ/ կարևոր են համարվում շատ անդամների կողմից:

- Համարյա բոլոր անդամներն ունեն համակարգիչ, ինտերնետ, էլ.փոստ:
- Անդամների մեծ մասը տեղեկատվությունը ստանում է էլեկտրոնային փոստի միջոցով:
- Անդամների մեծ մասը նախընտրում է տեղեկացվել էլ.փոստի միջոցով: Որպես այլընտրանք նրանք նախընտրում են նաև Ֆեյսբուքը:
- Անդամները չեն պատասխանում գրավոր հարցումներին մի շարք պատճառներից ելնելով: Քարտուղարությունը կարիք ունի որոշել կամ այլընտրանքային ճանապարհներ գտնել անդամներից տեղեկատվություն ստանալու համար (հեռախոս, դեմ առ դեմ ժողովներ) կամ անդամներին մոտիվացնել, որպեսզի էլ. փոստի միջոցով պատաս-խանեն:
- Քարտուղարությունը ստանում է շատ կարծիքներ օրենսդրական նախագծերի մասին հեռախոսի միջոցով և խնդրում են դրանք ներկայացնել անդամների անունից:
- Հետազոտության թիրախային անդամների 17% անհասանելի են: Քանակը կարող է ամբողջական իրավիճակը չներկայացնել, այնուամենայնիվ, առկա է այն փաստը, որ ոչ բոլոր անդամներն են հասանելի:
- Քարտուղարության կողմից տարածվող տեղեկատվությունից անդամների համար ամենահետաքրքիր տեղեկատվությունն է՝
- ԱԺ-ի մասին տեղեկատվություն
- Միջոցառումների, ժողովների, կոնֆերանսներին հրավերներ
- Տեղեկատվություն օրենսդրական նախագծերի մասին
- Կարծիքներ օրինագծերի մասին
- Անդամները խնդրում են լրացուցիչ տեղեկատվություն դրամաշնորհների, միջազգային դոնորների մասին
- Անդամները խնդրում են ստեղծել հնարավորություններ, որպեսզի իրենց սեփական կազմակերպությունը ցանցի միջոցով ներկայացնեն:

Կայքի վերաբերյալ եզրակացություններ:

- Կայքը օգտագործվում է որոշ անդամների, բայց ոչ շատերի կողմից: Այս խնդիրը կարող է լուծվել:
- ԱԺ-ի և օրենսդրության մասին տեղեկատվությունը կայքում լավ է գնահատվում անդամների կողմից:
- Ցանցի շատ անդամներ չեն հասկանում կայքի ֆունկցիաները: Նրանք չգիտեն, թե ինչպես օգտագործել այն: Նրանք չեն տեսնում պատճառ կանոնավոր կերպով այն օգտագործելու համար:
- Կայքն անհրաժեշտ է ավելի գրավիչ դարձնել անդամների համար: Անդամները ցանկանում են կայքում ավելի շատ տեսնել տեղեկատվություն իրենց և այլ անդամների մասին:
- Շատ անդամներ մոռանում են կայքի գոյության մասին: Անհրաժեշտ է պարբերաբար հիշեցնել նրանց կայքի մասին:
- Շատ անդամներ (համարյա նրանց կեսը) չգիտեն կայքի մասին: Անդամները կարիք ունեն տեղեկացվելու դրա մասին:

- Շատ անդամներ չգիտեն, որ կարող են նպաստել այն տեղեկատվության բարելավմանը, որը տեղադրվում է կայքում:
- Ցանցի ինտերակտիվ բաղադրիչները արդյունավետ չեն (բլոգ, ֆորում): Անդամները կայքը դիտարկում են ավելի շատ որպես տեղեկատվության աղբյուր:
- Քանի որ կայքում տեղեկատվությունը հաճախակի չի թարմացվում, անդամները կարիք ունեն էլ.փոստի միջոցով տեղեկացվելու, որ կայքում նորություն է տեղադրվել:
- Հապճեպ տեղեկատվությունը չի կարող տեղադրվել կայքում, քանի որ անդամները կանոնավոր կերպով չեն ստուգում կայքը: Այդպիսի տեղեկատվությունը պետք է էլեկտրոնային փոստի, Ֆեյսբուքի կամ հեռախոսի միջոցով փոխանցել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանցի անդամ կազմակերպությունների պահանջները բավարարելու համար քարտուղարությունը պետք է՝

էլ.փոստ

- Ենթադրվում է, որ հեռախոսի և էլեկտրոնային փոստի միջոցով անդամներից տեղեկատվություն ստանալու փորձարկված միջոցը ամենաարդյունավետն է:
- Ֆեյսբուք սոցիալական ցանցը կարող է ծառայել որպես լրացուցիչ գործիք հատուկ տեսակի տեղեկատվություն տարածելու և քննարկելու համար:

Կայք

- Բարելավել կայքը, որպես անդամ կազմակերպությունների համար տեղեկատվության աղբյուր, ավելացնել առաջիկա դրամաշնորհների, միջազգային/ազգային դոնորների մասին տեղեկատվություն:
- Ակտիվ անդամներին ուղարկել տեղեկատվական հաղորդագրություններ (newsletter) և տեղեկացնել անդամներին կայքում տեղադրված նորությունների մասին:
- Անդամ կազմակերպությունները ցանկանում են իրենց ներկայացնել կայքում, սակայն չեն օգտվում Ցանցի կայքը, որպես գործիք օգտագործելու հնարավորությունից, ուստի պետք է աջակցել նրանց՝ պատրաստելով և տեղադրելով տեղեկատվություն անդամ ՀԿ-ների գործունեության մասին, ինչպես նաև՝ նրանց վերաբերող հայտարարություններ:
- Քարտուղարությունը կարող է խնդրել ՀԿ-ներին շատ կարճ տեղեկատվություն ուղարկել իրենց գործունեության մասին, դրանք խմբագրել և հրատարակել ամենամսյա տեղեկատվական հաղորդագրություններում: Քարտուղարությունը նաև պետք է ամեն ամիս 147 անդամներից 3-ին նախապես մշակված ձևաչափով հարցնի, թե արդյո՞ք կարող են որևէ տեղեկատվություն տրամադրել:
- Քարտուղարությունը պետք է ներդնի կայքում տեղեկատվություն ներկայացնելու համար անդամներին խրախուսող գործիքներ:

Կայքի ինտերակտիվ բաղադրիչներ

- Կայքում բլոգի բաժինը կարող է հանվել: Ոչ մի միջազգային ՀԿ այլևս չի օգտագործում բլոգը: Փոխարենը Ցանցը պետք է օգտագործի Ֆեյսբուքի հնարավորությունները (շատ անդամներ այն արդեն օգտագործում են) կամ այլ առցանց գործիքով կազմակերպի քննարկումներ (տարբեր կազմակերպություններ նման փորձ արդեն ունեն):

- Հանրային ցանցը պետք է ստեղծի խումբ սոցիալական որևէ ցանցում (ամենահարմար տարբերակը Ֆեյսբուքն է), որտեղից շահագրգիռ կազմակերպություններին կուղղորդի դեպի Ցանցի կայք:
- Ցանցի քարտուղարությունը պետք է տեղեկատվական ժողովներ կազմակերպի գրասենյակում անդամների համար և բացատրի, թե ինչի համար է կայքը և ինչպես կարող են կազմակերպություններն այն օգտագործել ի նպաստ իրենց:
- Քարտուղարությունը պետք է հրատարակի օրենսդրական նախագծերի վերաբերյալ անդամ կազմակերպությունների կարծիքներն ու առաջարկությունները:

Կոնտակտներ

- Քարտուղարությունը պետք է պարբերաբար, օրինակ՝ տարին մեկ անգամ, ստուգի անդամների կոնտակտային ինֆորմացիան և թարմացնի: Աշխատանքը հեշտացնելու համար քարտուղարությունը կարող է օգտագործել, օրինակ, միջոցառումների գրանցման թերթիկները կամ հրավերները:

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության»
հասարակական կազմակերպություն

Քաղաքացիական հասարակության կառույցներին
պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի
առկա վիճակը և հիմնախնդիրները

Ներածություն

Հասարակական միավորումների և առհասարակ, հասարակական սեկտորի զարգացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի ֆինանսական աջակցություն է տրամադրում քաղաքացիական հասարակության կառույցներին (ՔՀԿ): Համապատասխանաբար, յուրաքանչյուր տարի «Պետական բյուջեի մասին» օրենքով սահմանվում է ՔՀԿ-ներին հատկացվելիք ֆինանսական աջակցության չափը: Յուրաքանչյուր նախարարություն ներկայացնում է բյուջետային հայտ, որի մեջ ներառվում են այն բոլոր ծախսերը, որոնք նախատեսվում են այդ տարի և «Պետական բյուջեի մասին» օրենքով ՀՀ կառավարությանը հանձնարարվում է ապահովելու բոլոր, այդ թվում՝ ՔՀԿ-ների ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային հատկացումները:

Սակայն Կառավարությունը չունի ֆինանսական աջակցության հստակ և հետևողական քաղաքականություն, որը կսահմանի, թե ինչպես են ընտրվում ֆինանսավորվող ծրագրերը, ինչ մեխանիզմով և որքան գումար է հատկացվում ՔՀԿ-ներին: Բացի այդ, ՔՀԿ ֆինանսական հատկացումների հետ կապված գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի և տեսանելի չէ, ինչը հնարավորություն չի տալիս եզրակացություններ կատարել դրամաշնորհների տրամադրման արդյունավետության և թափանցիկության վերաբերյալ:

Նախարարությունները համաֆինանսավորման և ֆինանսավորման ծրագրեր են իրականացնում ՔՀԿ-ների հետ, սակայն այդ աջակցությունը տեսանելի չէ հանրության համար: Նախարարությունների կայքերի մեծ մասում և կառավարության կայքում չկա համապատասխան տեղեկատվություն դրամաշնորհների հայտարարման, կազմակերպությունների ընտրության մեխանիզմների մասին, ինչպես նաև՝ արդեն իսկ իրականացված ծրագրերի հաշվետվություններ: Թերևս, բացառություն է կազմում Սպորտի և երիտասարդական հարցերի նախարարությունը (ՍԵՀՆ), որը www.cragrer.am կայքի միջոցով ապահովում է ՔՀԿ-ին դրամաշնորհների տրամադրման գործընթացի թափանցիկությունը:

Մինչդեռ, օրինակ, ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից տրամադրված միջոցների տրամադրման մեխանիզմի կամ միջոցներ ստացած կազմակերպությունների մասին

հնարավոր չէ տեղեկատվություն ստանալ, այն ինչ յուրաքանչյուր տարի այս կառույցը տալիս է 100 մլն դրամի դրամաշնորհներ միայն առաջին կիսամյակի համար, սակայն որևէ հաշվետվություն, կարգ հրապարակային չէ:

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի կողմից 2012 թվականին կատարվել է ՀՀ 2010թ. և 2011թ. պետական բյուջեների կիսամյակային տվյալների համեմատական վերլուծություն, ինչպես նաև՝ բացահայտվել են բյուջետային միջոցները ՀԿ-ներին հատկացնելու դրսևորումները, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ, սակայն հստակ մեխանիզմ դեռևս չի գործում:

ՀՀ 2012թ. պետական բյուջեից, 20 նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների միջոցով ՀԿ-ները և տարբեր տեսակի հիմնադրամներ ստացել են ավելի քան 7 միլիարդ դրամի ֆինանսավորում:

Այժմ Հայաստանում չի գործում ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման մեկ միասնական մեխանիզմ, ինչը անհրաժեշտություն է առաջացնում պարբերաբար հավաքագրել և վերլուծել տեղեկություններ այդ գործընթացի բոլոր դրսևորումների վերաբերյալ: Այդ նպատակով ՊՀՔՀ ՀԿ-ն իրականացնում է հետազոտություն պարզելու նպատակով, թե որոնք են ՔՀԿ պետական ֆինանսական աջակցության տրամադրման մեխանիզմները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսական օժանդակության ծավալը և սկզբունքները:

Հետազոտության խնդիրներն են պարզել՝

1. ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության չափը,
2. ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման հիմնական ոլորտները և ուղղությունները,
3. ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգը,
4. ՔՀԿ-ներին տրամադրված պետական ֆինանսական աջակցության հաշվետվողականության և մոնիտորինգի սկզբունքները:

Բացի այդ, հետազոտությունը հնարավորություն տվեց շահագրգիռ կողմերից ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի բարելավման առաջարկներ ստանալ:

Մեթոդաբանություն

Հետազոտական նպատակի և խնդիրների իրականացման համար օգտագործվել են տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները.

- Փաստաթղթերի վերլուծություն

Ուսումնասիրվել են ՀՀ պետական բյուջեից ՔՀԿ-ներին տրամադրվող հատկացման տողերը, բյուջեի կատարման փաստաթղթերը: Որպես տեղեկատվության աղբյուր են ծառայել, մասնավորապես, www.e-gov.am կայքը և նախարարություններից ստացած գրությունները՝ 2012թ. ՔՀԿ-ներին տրամադրված ֆինանսավորման վերաբերյալ:

- Խորին հարցազրույց

Իրականացվել է 14 խորին հարցազրույց ՔՀԿ ներկայացուցիչների հետ, որոնք ընտրվել են պետական ֆինանսավորում ստացած ՔՀԿ-ների ցուցակներից՝ ըստ ստացած ֆինանսական միջոցների չափի:

- Փորձագիտական հարցազրույց

Իրականացվել է 6 հարցազրույց նախարարությունների ներկայացուցիչների հետ: Ստացված տվյալներն անցել են թվային և բովանդակային վերլուծություն՝ ըստ սահմանված հետազոտական խնդիրների:

Հիմնական բացահայտումներ

1. ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության ծավալը

ՀՀ 2012թ. պետական բյուջեից 20 նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների միջոցով ՀԿ-ները, հիմնադրամները և իրավաբանական անձանց միությունները ստացել են ավելի քան 7 միլիարդ դրամի ֆինանսավորում: 2012 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տարբեր նախարարություններից ու գերատեսչություններից ֆինանսավորում ստացած ՔՀԿ-ների անունները և ֆինանսավորման ծավալները ներկայացված են Հավելված 1-ում:

ՀՀ տարբեր նախարարություններ և գերատեսչություններ ֆինանսավորել են ՔՀԿ-ների գործունեությունը կամ միջոցներ են հատկացրել վերջիններիս կողմից իրականացվող ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացությունները՝

1. Ընդհանուր առմամբ, 2012թ. պետական կառույցների կողմից ՔՀԿ սեկտորին տրամադրվել է մոտ 7,4 մլն դրամ, որը տրամադրվել է, ընդհանուր առմամբ, 115 կազմակերպությունների: ՔՀԿ դաշտի ֆինանսավորման ծավալներով առաջատար դիրքում են գտնվում Սպորտի և երիտասարդության հարցերի, Կրթության և գիտության և Մշակույթի նախարարությունները, որոնցից յուրաքանչյուրը 2012թ. ՔՀԿ-ներին հատկացրել է մեկ միլիարդից ավելի ֆինանսավորում:
2. Որոշ ՔՀԿ-ներ ֆինանսավորում են ստանում այնպիսի տողերից, որոնք առավել համապատասխան են պետական կազմակերպությունների՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին», «Կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին» և «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» տողերով:
3. Պետական ֆինանսավորման հատկապես մեծ (յուրաքանչյուր կազմակերպության հաշվով՝ 100 մլն և ավելի) ծավալներ են ստացել 19 կազմակերպություն, որոնց բաժին է ընկել 2012թ. ՔՀԿ դաշտի պետական ֆինանսավորման ընդհանուր ծավալի ավելի քան 60%-ը: Այս կազմակերպություններից 8-ը ՀՀ կառավարության կամ պաշտոնյաների կողմից հիմնված հիմնադրամներն են, 8-ը՝ մարզական ՀԿ-ներ կամ սպորտային ֆեդերացիաներ:
4. Դեռևս ձևավորված չէ ՔՀԿ-ներին պետական ֆինանսական միջոցների հատկացման միասնական մեխանիզմ: Նախարարությունների մեծամասնությունը չունեն նաև ՔՀԿ-ների ֆինանսավորման ներքին հստակ քաղաքականություն:
5. Միայն Սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունն ունի դրամաշնորհների տրամադրման մրցութային և հայտարարվող գործընթաց, իսկ մյուս նախարարություններում դրամաշնորհները տրամադրվում են առանց հայտարարված մրցութային գործընթացի: Նախագահի աշխատակազմի կողմից դրամաշնորհները ևս տրամադրվում են մրցութային կարգով՝ «Զարգացում և ինտեգրացիա» հասարակական կազմակերպության միջոցով, սակայն դրամաշնորհային ծրագրերի ընտրության չափանիշները հայտնի չեն, իսկ դրամաշնորհ ստացած կազմակերպությունները հիմնականում նորաստեղծ են:
6. ՔՀԿ-ներին պետական ֆինանսական միջոցների հատկացման չորս հիմնական մեխանիզմ է գործում՝ դրամաշնորհների տրամադրում, սուբսիդիա, նվիրաբերություն և ծառայությունների մատուցման պայմանագիր: ՔՀԿ-ներին հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկումը կատարվում է նախարարությունների կողմից հիմնականում եռամսյակային կամ տարեկան, երբեմն՝ ամսական կտրվածքով: Առավել մեծ ուշադրություն է հատկացվում ֆինանսական վերահսկմանը, մինչդեռ ծրագրերի կատարողականի մշտադիտարկման համակարգված և միասնական մեխանիզմ չկա: Հաճախ մշտադիտարկում առհասարակ չի իրականացվում. կատարողականի վերահսկումը սահմանափակվում է ՔՀԿ-ների կողմից պարբերական և կամ ավարտական ծրագրային հաշվետվությունների ներկայացմամբ: Ծրագրերի արդյունքների և ազդեցության գնահատման համակարգը բացակայում է:

«Բաց կառավարման գործընկերություն»
ՀՀ երկրորդ (2014-2016 թթ.) գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ
աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված՝
«Արազա» ԲՀԿ-ի տեսակետն ու առաջարկությունները

«Արազա» կազմակերպությունը, հանդիսանում է շահերի պաշտպանության կազմակերպություն և ՀՀ-ում թափանցիկ ու մասնակցային կառավարման մշակույթի ձևավորման գործընթացում ունի լուրջ ներդրում, ուստի խիստ կարևորում է «Բաց կառավարման գործընկերություն» ծրագրին ՀՀ-ի ներգրավվածությունն ու դրան ուղղված արդեն երկրորդ գործողությունների պլանի մշակումը: Ուստի շահագրգիռ է ծրագրի մշակման փուլում ներկայացնել տեղեկատվական աղբյուրների մատչելիության, ինչպես նաև՝ մասնակցային կառավարման մեխանիզմների ու ընթացակարգերի պլանավորման հանրային առաջարկների ներկայացմամբ: Այդ նպատակով կազմակերպությունը 2013թ. հոկտեմբերի 4-ին կազմակերպել էր հանրային քննարկում, հավաքագրել տեսակետներ և առաջարկներ, անց կացրել գործողությունների պլանի նախագծի ուսումնասիրություն և վերլուծություն և դրանց հիման վրա նախագիծը մշակող աշխատանքային խմբի քննարկմանն է ներկայացրել ստորև առաջարկները:

- Առաջնորդվելով գործողությունների պլանի կառուցվածքային սկզբունքով՝ անհրաժեշ է ներկայացնել ոչ միայն կատարված գործողությունները, այլ նաև՝ ընթացիկ նշելով, թե որ փուլում են դրանք և երբ են ավարտվելու:
- Անհրաժեշտ է ստեղծել բնակչության անձնական տվյալների միասնական տեղեկատվական թվայնացված բազա (մասնավորապես, աշխատանքային ստաժի, սոցիալական կարգավիճակի մասին՝ ներառելով նաև Խորհրդային Հայաստանի արխիվային տեղեկատվությունը), որը հավասարապես հասանելի կլինի համապատասխան պետական կառույցներին, մասնավորապես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գերատեսչություններին:
- Միաժամանակ անհրաժեշտ է բարելավել իրավական դաշտն այնպես, որ քաղաքացու կամ բնակչի անձնական տվյալների, ներկայացվող փաստաթղթերի ստուգման կամ ճշգրտման մեխանիզմ սահմանվի՝ օգտագործելով վերոնշյալ էլեկտրոնային տեղեկատվական բազան կամ անհրաժեշտության դեպքում, համապատասխան կառույցների միջև տեղեկատվության փոխանակման այլ միջոցներ ներդրվեն, որպեսզի բացառվի քաղաքացուց լրացուցիչ տեղեկանքներ պահանջելու և նրանց բյուրոկրատական քաշքշուկների մեջ գցելու գործող պրակտիկան:
- Անհրաժեշտ է օրենսդրական նախաձեռնությունների մասին հասարակությանն իրազեկել պաշտոնական կայքերի միջոցով միասնական սկզբունքներով և ձևաչափով, որը կլինի մատչելի օգտագործողի համար:
- Նախարարությունների և ԱԺ մշտական հանձնաժողովների ընթացիկ օրինաստեղծ գործունեության մասին տեղեկատվությունը կարելի է տրամադրել բաժանորդագրման ռեժիմով:
- Օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն առցանց զետեղող պաշտոնական կայքերում նախատեսել հետադարձ կապի և առաջարկություններով հանդես գալու հնարավորություն:
- Կառավարությանը, նախարարություններին և ԱԺ մշտական հանձնաժողովներին ներկայացված ՔՀ առաջարկությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները տեղադրել առցանց:
- Օրինագծերի և պետական քաղաքականություններն ամրագրող փաստաթղթերի հանրային քննարկման համար սահմանել ավելի երկար ժամկետներ, ոչ պակաս, քան՝ 15-օր:
- ԱԺ-ի, Կառավարության և նախարարությունների աշխատակազմի ներքո հիմնել հանրային կապերի պատասխանատուի հաստիք, որը պատասխանատու կլինի ՔՀԿ-ների հետ համագործակցությունը կազմակերպելու, համակարգելու և մշտադիտարկելու համար կամ այս լիազորությունը/պարտականությունը ներառել պաշտոնյաներից մեկի գործառույթներում:

- Ապահովել ՔՀԿ համայնքին տրամադրվող դրամաշնորհների, կամ ծառայությունների պատվիրակման թափանցիկ, մրցութային ընթացակարգեր, սահմանել և ներդնել դրանց ընթացքի և ազդեցության գնահատման արդյունավետ մեխանիզմներ, հաշվետվողականություն և թափանցիկություն:

«Բաց կառավարման գործընկերություն»
ծրագրի մշակման և իրականացման գործընթացին հանրային մասնակցության մակարդակի գնահատման ընթացքում բացահայտված և
ՀՀ երկրորդ (2014-2016 թվականներ) գործողությունների ծրագրի նախագծող աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված՝ անկախ փորձագետ
ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆԻ առաջարկությունները

- Ապահովել բուհերի գործունեության թափանցիկությունը, պարտադրել բուհերին իրենց կամ ՀՀ կրթության և գիտության նախարարությանը առցանց հրապարակել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 10-րդ մասով նախատեսված հետևյալ փաստաթղթերը՝ *ՀՀ-ում գործող բոլոր բուհերի ռազմավարական ծրագրերը, ԲՈՒՀ-երի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները (այդ թվում՝ ֆինանսական), լիազորված մարմնի կողմից բուհերի գործունեության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը*:
- Թափանցիկ դարձնել դպրոցների ֆինանսական կառավարումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ դպրոցներում մեծ ծավալով գումարներ են հավաքվում: Նմանապես պետք է թափանցիկ դարձնել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը և ֆինանսական կառավարումը:
- Թափանցիկ դարձնել ՀՀ առողջապահության ոլորտի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը: Առցանց հրապարակել և մատչելի դարձնել Պետական առողջապահական գործակալության տվյալների բազան և հնարավորություն ստեղծել, որպեսզի ՀԿ-ները կարողանան ձեռք բերել առողջապահության ոլորտի վերաբերյալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը: Միջազգային կազմակերպությունների ինտերնետային կայքերն, օրինակ, թույլ են տալիս ցանկալի տեղեկատվությունը ներբեռնել տարբեր ձևաչափերով:
- Բարձրացնել պետական ֆինանսական կառավարման վերաբերյալ տեղեկատվու-թյան թափանցիկությունը: Հնարավորություն ստեղծել ինտերնետային կայքից տարբեր ձևաչափերով ներբեռնել տեղեկատվություն պետական բյուջեի, պետական պարտքի և պետական ֆինանսական կառավարման այլ ոլորտների վերաբերյալ: Այդ տեղեկատվության մի մասը հասանելի է ՀՀ ֆինանսների նախարարու-թյան կայքում, սակայն միայն pdf ֆորմատով, ինչը հարմար չէ վերլուծություն-ների կատարման համար: Միջազգային կազմակերպությունների ինտերնետային կայքերը թույլ են տալիս անհրաժեշտ տեղեկատվությունը ներբեռնել Excel, CVS կամ որևէ այլ հարմար ֆորմատով:
- Ավելի թափանցիկ դարձնել պետական գնումների համակարգի գործունեությունը և հնարավորություն տալ գնումների էլեկտրոնային համակարգից ինտերնետի միջոցով ագրեգացված տվյալներ ստանալ պետական գնումների վերաբերյալ (ըստ գնման տարբեր եղանակների, ըստ գերատեսչությունների և այլն):

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի առաջարկությունները

- Ցանկացած հարկ վճարողի կողմից պաշտոնական պարզաբանումների տրամա-դրման, ինչպես նաև՝ գանգատարկման դիմումները, հարկ վճարողի կողմից համաձայնության դեպքում, տեղակայել հարկային մարմնի պաշտոնական կայքում՝ դիմումի մուտքա-գրման ամսաթվով և դրա վերաբերյալ հարկային մարմնի պատասխանով՝ նշելով նաև պատասխանի ամսաթիվը: Այս գործիքը հնարավորություն կտա նաև այլ հարկ վճա-րողներին ծանոթանալ ինչպես դիմումի, այնպես էլ պատասխանի բովանդակությանը, իսկ հարկային մարմնի գործընթացների համար պատասխանատու ղեկավար պաշտո-

նատար անձինք կարող են հետևել, թե որքանով են պահպանվում դիմումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետները:

- Գանգատարկման խորհրդում և հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովում մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցչության ապահովումը դիտորդի կարգավիճակով կարող է էական գործոն և երաշխիք հանդիսանալ հնարավոր կողմնակալ մոտեցումների բացառման, հանձնաժողովների աշխատանքների թափանցիկ և անաչառ մոտեցումների վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերին տեղեկատվություն ստանալու համար: Այս գործիքի իրավական հիմքերն առկա են: Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգի 20-րդ կետով սահմանված է, որ հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Դրանց կարող է մասնակցել ցանկացած անձ, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները՝ նախապես այդ մասին տեղեկացնելով: Գանգատարկման հանձնաժողովի նիստերը կարող են լինել դռնփակ՝ դիմում-գանգատ ներկայացրած անձի գրավոր միջնորդության հիման վրա Գանգատարկման հանձնաժողովի նախագահի կայացրած որոշմամբ առևտրային կամ այլ (այդ թվում՝ հարկային) գաղտնիք պահպանելու անհրաժեշտության դեպքում: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 21-ի թիվ 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետով սահմանված է, որ Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ ազատ քննարկման և հրապարակայնության պայմաններում: Հարկ վճարողների գանգատարկման դիմում-բողոքները հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովն ուղարկում է Գանգատարկման խորհուրդ և հանձնաժողովում դիտորդի կարգավիճակով ներգրավված մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Ներկայումս հարկ վճարողների դիմում-բողոքները Գանգատարկման խորհրդին հասանելի են լինում միայն այն դեպքերում, երբ Հանձնաժողովն ունի բողոքի չբավարարման մոտեցում:
- Հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն իրականացնող հանձնաժողովի աշխատանքները թափանցիկ անցկացնելու համար դիտորդի կարգավիճակով ներգրավվել մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

«Բաց կառավարման գործընկերություն» ծրագրի
ՀՀ երկրորդ (2014-2016 թվականներ) գործողությունների ծրագրի նախագծող աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված ՔՀԿ համայնքի առաջարկների վերաբերյալ ՀՀ կառավարության պաշտոնական մեկնաբանությունները

Արազա» ԲՀԿ—ի առաջարկությունների կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1-ին կետ

Առաջարկությունն ընդունված է ի գիտություն:

3-րդ և 5-7-րդ կետեր

Տեղեկացնում ենք, որ ներկայումս շրջանառության մեջ է ՀՀ կառավարության «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» որոշման նախագիծը: Այդ կապակցությամբ առաջարկում ենք դիմել իրավասու մարմնին (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն)՝ վերոնշյալ առաջարկությունները հիշյալ որոշման նախագծի շրջանակներում քննության առնելու առաջարկությամբ:

9-րդ կետ

Նմանատիպ առաջարկությամբ հանդես էր եկել նաև «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ն: Առաջարկությունը քննության առնելու նպատակով ուղարկվել էր ՀՀ ֆինանսների նախարարություն, որի պատասխանը հետևյալն է. Ֆինանսների նախարարությունը հայտնում է, որ պետական մարմինների կողմից ՔՀԿ-ներին ֆինանսավորման տրամադրման, ֆինանսավորված ծրագրերի մշտադիտարկման ու գնահատման միասնական համակարգի ներդրումը նախատեսվում է իրականացնել ծրագրային բյուջետավորման

(արդյունքի վրա հիմնված) ներդրման բարեփոխումների շրջանակներում՝ ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներին զուգահեռ:

Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն իսկ մշակվել և 2013 թվականի հոկտեմբերից շրջանառության մեջ է դրվել «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը նպատակ ունի նաև ապահովել ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը:

<u>2-րդ, 4-րդ և 8-րդ կետեր</u>

Առաջարկությունները չեն համապատասխանում Բաց կառավարման գործընկերության գաղափարախոսությանը, վերջինիս արժեքներին և սկզբունքներին:

Փորձագետ ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆԻ միջոցով հավաքագրված և աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացված ՔՀԿ-ների առաջարկների վերաբերյալ պատասխանները հետևյալն են.

- ✓ ԲՈՒՀ-երի գործունեության թափանցիկության հետ կապված հարցերի առնչությամբ հայտնում ենք, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն առաջարկել է ԲՈՒՀ-ին իրենց կայք էջերում ավելացնել բուհի գործունեության տարեկան հաշվետվությունը (այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունները) և ռազմավարական ծրագիրը (որոշ ԲՈՒՀ-ում դրանք արդեն իսկ տեղադրված են):
- ✓ Առողջապահության ոլորտի գործունեության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության հետ կապված հարցերի առնչությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը ձևակերպել և ներկայացրել է երկու պարտավորություն՝ ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի նախագծում ներառելու նպատակով (առողջապահության նախարարության պատասխանը և ձևակերպումները կցվում են):

1.4. Ամբուլատոր-պոլիկլինիկական վերլուծական հաշվետվական կայքէջի ստեղծում

- ✓ Նպատակն է ապահովել բնակչության մասնակցությունը ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի կողմից ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, հայտնաբերման և բուժման ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների գնահատմանը՝ տեղեկատվության էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Արդյունքում ակնկալվում է ծրագրի իրականացման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների տեղադրում՝ ըստ մարզերի և առանձին բուժհիմնարկների, բնակչի համար սկրինինգային հետազոտությունների իրականացման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության տեղադրում, բնակչի ԱԱՊ բժշկի մոտ գրանցման և սկրինինգային հետազոտությունն անցնելու վերաբերյալ տվյալների ստուգման հնարավորության ապահովում:

1.5. Պետական առողջապահական գործակալության տեղեկատվական վերլուծական կայքէջի ստեղծում

- ✓ Նպատակն է ապահովել պետական պատվերի շրջանակներում ցուցաբերված բժշկական օգնության և սպասարկման ծավալների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը: Արդյունքում ակնկալվում է պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ քանակագումարային ամփոփ հաշվետվությունների տեղադրում՝ մարզային և առանձին բուժհիմնարկների կտրվածքով, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների, ծառայությունների որոնման հնարավորության ապահովում, պետական պատվերի շրջանակներում բուժօգնության մատուցման հիմնական սկզբունքների վերաբերյալ թարմացվող տեղեկատվության հրապարակում (բնակչության սոցիալական/հատուկ խմբերի վերաբերյալ, պահանջվող փաստաթղթերի ցանկեր):

Հարցազրույց ՀՀ ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյանի հետ

Հարգելի պարոն Պողոսյան

1. **Դուք օրինաստեղծ գործընթացների մասնակցության փորձառությունը սկսել եք որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, հիմա դա շարունակում եք որպես պատգամավոր: Խնդրում եմ ասեք՝ օրինաստեղծ գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության ընթացակարգերի, ձևաչափի, ազդեցություն ունենալու լծակների մասին ձեր պատկերացումներն ու տեսլականը փոխվե՞լ են, թե ոչ: Եթե այո, ապա չե՞ք ասի թե ինչպիսին էր այն մինչև պատգամավորական աշխատանքը և հիմա:**

Այո, ճիշտ եք, օրինաստեղծ գործընթացը նորություն չէր ինձ համար: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) երկար տարիներ զբաղվել է նման գործունեությամբ: Իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք ունեցել են նաև օրինաստեղծ բաղադրիչ: Կարծում եմ, լինելով ՄԶՄԿ գործադիր տնօրեն, ինձ հաջողվել է ավելի մեծ ներդրում ունենալ այս գործում, քան մեկ տարվա ընթացքում՝ որպես պատգամավոր: Նախ, ՄԶՄԿ-ն ընկալվել և ընկալվում է որպես անկախ ու բարձր մասնագիտական կառույց: Այն իր ծրագրերով կարողանում է որոշումների կայացման գործընթացում ներգրավել թե՛ որոշումների անմիջական հետևանքներն իրենց վրա զգացողներին՝ քաղաքացիներին, թե՛ տվյալ որորտում ակտիվ փորձագիտական կառույցներին, և թե՛ հենց որոշում կայացնողներին՝ նրանց տրամադրելով քննարկման ընդհանուր հարթակ: Իմ պարագայում, լինելով ընդդիմադիր խմբակցության պատգամավոր, շատ անգամ հանդիպում եմ այն դժվարություններին, որոնք բնորոշ են հայկական խորհրդարանական մշակույթին, օրինակ՝ որ ընդդիմության նախաձեռնությունները, որպես կանոն, անպայման պետք է մերժվեն: Այնուամենայնիվ, չեմ հուսաթափվում և վստահ եմ, որ պրոֆեսիոնալիզմն այդուհանդերձ կհաղթի:

2. **Պատգամավորական Ձեր գործունեության ընթացքում դուք հնարավորություն ունեք և հաճախ հաղորդակցվում ենք քաղաքացիական հասարկության գործունեության հետ՝ Ազգ լսումների, ինչպես նաև հանրային նախաձեռնությունների քննարկումների շրջանակում: Ի՞նչ գնահատական կտաք դրանց, որքանո՞վ են դրանք նպաստում պատգամավորներին որոշում կայացնելիս և ընդհանրապես շատ է պատգամավորների այն բանակը, որոնք ընդհանրապես հետաքրքրված են ծանոթանալ և ինչ որ չափոհ հաշվի նստել հանրային կարծիքի և կարիքի հետ:**

Ասեմ, որ խնդրի արհեստավարժ վերլուծությունը և այլնտրանքային լուծումների գրագետ առաջարկները միշտ էլ ազդում են որոշումների կայացման գործընթացի վրա: Ցանկացած քննարկում, լսում կամ հանդիպում ունենում է իր ազդեցությունը: Բայց, կա մի այլ խնդիր. հաճախ հանձնաժողովների նիստերի, լսումների և այլ աշխատանքային քննարկումների ընթացքում հնչած կարծիքներն այդպես էլ մնում են ուղղակի արտահայտված տեսակետներ, որոնք երբեմն չեն պաշտպանվում քվեարկության ընթացքում: Համաձայն Սահմանադրության՝ քվեարկության ժամանակ պատգամավորը կաշկանդված չէ որևէ այլ բանով, քան իր սեփական խիղճը: Սակայն իրականությունն այլ բան է ցույց տալիս: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր խիստ ու սուր քննադատության են ենթարկում կառավարության կողմից առաջարկված նախագծերը, ի վերջո կողմ են քվեարկում՝ կաշկանդված «կուսակցական հրամանով»: Իսկ պատգամավորների

թիվը, ովքեր ընդհանրապես հետաքրքրված են ծանոթանալ և հաշվի նստել հանրային կարծիքի և կարիքի հետ, ըստ իս, քիչ չէ:

3. **Արդյոք կան կազմակերպություններ, որոնք առանձնանում են օրինաստեղծ գործընթացում շահերի պաշտպանության և որոշում ընդունողների վրա ազդեցություն գործելու իրենց փորձառությամբ: Եթե այո, ապա չե՞ք նշի որոնք են և ինչում են նրանց առանձնահատկությունը, որ կուզենաիք ընդօրինակեն այլոք:**

Հայաստանում շատ կազմակերպություններ կան, որորնք կարող են մասնակցել որոշումներ կայացնելու և մասնակցային գործընթացներ նախաձեռնելու գործին: Խնդիրը մեր մոտ այն է, որ այդ կարողությունները կապված չեն ժողովրդավարական այն ինստիտուտի հետ, որը կոչվում է «ընտրություններ»: Ստացվում է, որ քաղաքացուն լսելու ու որոշումներ կայացնելու գործընթացը պայմանավորված է որոշումներ կայացնողների «բարի կամքով»: Իսկ ժողովրդավարական երկրում դա պետք է այլ կերպ լիներ՝ որոշման կայացման գործընթացը պետք է պայմանավորված լինի ընտրողի ցանկություններով:

4. **Եվ վերջին հարցը: Առընչվե՞լ եք արդյոք պետական կառուցների հետ համագործակցող «Հանրային ցանցի» գործունեությանը և եթե այո, ապա ինչպես եք գնահատում նրա աշխատանքը, ինչ սպասելիքներ ունեք, որ վերջինս գուցե չի արդարացնում:**

Ի սկզբանե «Հանրային ցանցի» հետ համագործակցել եմ ինչպես ՄԶՄԿ գործադիր տնօրեն:Հիմա էլ դեռ օգտվում եմ իրենց վերլուծություններից և հետազոտություններից, ինչպես նաև մասնակցում եմ կազմակերպված քննարկումներին: Շատ ուրախ եմ, որ իրենց գործունեությունը տարեց տարի դառնում է ճանաչելի և դառնում ավելի ընդգրկուն ու խորացված: Ակնկալում եմ ,որ մեր համագործակցությունը կլինի շարունակական, ինչպես ԱԺ-ում, այնպես էլ քաղաքացիական սեկտորում:

Օրենսդրական օրակարգի քննարկման օրեր 2013

Օրենսդրական օրակարգի քննարկման օրեր (ՕՕՔՕ) նախաձեռնությունը իրականացվում է 2011թ-ից ի վեր: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող և Քաունթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող այս նախագծի հիմնական նպատակն է յուրաքանչյուր տարվա օրենսդրական ցիկլի սկզբում հարթակ տրամադրել Հայաստանում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ)՝ նախաձեռնող լինելու և ՀՀ ԱԺ-ի համապատասխան մշտական հանձնաժողովների հետ հանդիպումների և քննարկման միջոցով օրենսդրական օրակարգի ձևավորման գործընթացի վրա ներազդելու համար:

ՕՕՔՕ-ն իրականցվում է համայնքային քննարկումների և ՔՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած Աշխատանքային խմբերում քննարկումների միջոցով: Յուրաքանչյուր տարի տեղի են ունենում համայնքային քննարկումներ /մեկական Հայաստանի հյուսիսում, կենտրոնում և հարավում/, որին մասնակցում են տարբեր համայնքների ներկայացուցիչներ՝ ՏԻՄ-երից, քաղաքացիական ակտիվ խմբերից, մարզային ՔՀԿ-ներից՝ ներկայացնելով իրենց համայնքներում առկա, օրենսդրական լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրները

հավաքագրվում են ըստ ոլորտների, այնուհետև քննարկվում Երևանում՝ ԱԺ հանձնաժողովների թեմատիկ ոլորտներին համապատասխանող թեմատիկ աշխատանքային խմբերում: Այս ԱԽ-երում ազատ մասնակցության սկզբունքով ներգրավվում են համապատասխան ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող, փորձառու ՔՀԿ-ներ, ինչպես նաև անկախ փորձագետներ: ԱԽ-ները ամփոփում և մասնագիտական ձևակերպում են տալիս համայնքներում բարձրաձայնած հիմնախնդիրները, ինչպես նաև ձևակերպում են իրենց գործունեության արդյունքում բացահայտված հիմնախնդիրների օրենսդրական լուծումների վերաբերյալ առաջարկություններ: Այս առաջարկություններն այնուհետ ներկայացվում են ԱԺ համապատասխան հանձնաժողովի ուշադրությանը՝ նամակի, ապա՝ ՀՀ ԱԺ-ում հանդիպում-քննարկման միջոցով:

2013թ-ին ՕՕՔՕ-ի գործընթացը մեկնարկել է ապրիլ ամսին՝ Հայաստանի ձայներ երեք մարզային քննարկումների կազմակերպմամբ: Մարզային քննարկումներն այս տարի կազմակերպվել էին Գավառում, Գյումրիում և Ձերմուկում: Մարզային քննարկումներին մասնակցել է 420 մարդ: 10 աշխատանքային խմբեր (ՀՀ ԱԺ-ի հանձնաժողովների գործունեության ոլորտից միայն երկուսին համապատասխան ԱԽ-եր չեն ձևավորվել՝ Արտաքին հարաբերություն և Եվրոպական ինտեգրում) ՀՀ ԱԺ-ի համապատասխան հանձնաժողովների ուշադրությանն են ներկայացրել 38 հիմնախնդիրներ՝ դրանց լուծման համար առաջարկելով ընդունել կամ լրամշակել 40 օրենքներ: 2013թ-ի դեկտեմբերի վերջի դրությամբ այդ առաջարկություններից 14-ը քննարկման փուլում են, 25-ը կքննարկվեն Կառավարության կողմից ՀՀ ԱԺ-ին համապատասխան օրենսդրական փաթեթները ներկայացնելուն պես, 3-ը մերժվել են, իսկ մյուսների վերաբերյալ ՀՀ ԱԺ-ի հանձնաժողովները խնդրել են հավելյալ տվյալներ, հիմնավորումներ, մանրամասներ:

Այս նախաձեռնության շրջանակներում Հանրային ցանցը մշտապես ակտիվորեն մասնակցություն է ունեցել՝ ներգրավվելով մարզային քննարկումներին, աշխատանքային խմբեր համակարգման աշխատանքներին: Միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, ՀՀ ԱԺ-ում հանդիպում-քննարկումների կազմակերպման լոբբինգի համար, որպես ինստիտուցիոնալ հարթակ, արդյունավետորեն օգտագործել նաև ՀՀ ԱԺ-ի և Հանրային ցանցի միջև ստորագրված համագործակցության հուշագրի ստեղծած հնարավորությունները:

Չնայած ՕՕՔՕ-ի արդյունքում ՔՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկությունների միայն մի փոքր մասն է անմիջապես ստանում օրենսդրական լուծում, սակայն վերջին երեք տարիներին իրականացված այս նախաձեռնությունն արդեն իսկ կատարել է իր կարևոր առաքելություններից մեկը՝ ստեղծել է ՔՀԿ-ների՝ օրենսդիրների աշխատանքներին մասնակցելու նոր մշակույթ:

Հանրային ցանցի անդամները ԱՄՆ-ում Իռեն Դանիելյան, Արշակ Գասպարյան

Օրենսդրական ոլորտի մասնագետների (Professional Fellows Program/PFP) ծրագիրը հովանավորում է ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական եւ մշակութային գործերիբաժինը: Հայաստանում PFP ծրագիրն իրականացնում է Ամերիկյան խորհուրդներկազմակերպությունը:

Ծրագիրը հնարավորություն է ընձեռում Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Ռուսաստանի և Թուրքիայի երիտասարդ մասնագետներին փորձառություն ձեռք բերել ԱՄՆ-ի պետական կառույցներում, քաղաքական և օրենսդրական գործընթացներում ներգրավված հասարակական կազմակերպություններում, մասնավոր ընկերություններում և այլուր: Ծրագիրը նախատեսված է այն մասնագետների համար, ովքեր գործունեություն են ծավալում պետական մարմիններում, քաղաքացիական հասարակության կազմակերպություններում, քաղաքական կուսակցություններում և ակտիվ մասնակցություն են ունենում օրենսդրության և քաղաքականության մշակման գործընթացում:

Այս տարի աշնանը Հայաստանը ծրագրում ներկայացնող 3 մասնակիցներից 2-ը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ էին, ովքեր նաև Հանրային ցանցի անդամ են

հանդիսանում: Ծրագրի շրջանակներում նրանք վերապատրաստվեցին ԱՄՆ Հավայի նահանգի խորհրդարանում: Շուրջ մեկ ամիս բացառիկ հնարավորություն ունեցան աշխատել պատգամավորների հետ՝ նրանց աշխատակազմի ղեկավարներին կից:

Ծրագիրն ինքնին միանգամայն հագեցած և հետաքրքրական է:Մասնակիցներից յուրաքանչյուրը ձեռք է բերում բացառիկ փորձառություն, ոլորտին առնչվող տեսական և գործնական գիտելիքներ, մեծաթիվ նոր և օգտակար ծանոթություններ, որոնցհետ կարելի է անշուշտ ապագայում համագործակցության եզրեր գտնել: Իրականում ծրագրի ընթացքում հնարավորություն ես ունենում ԱՄՆ և հատկապես Հավայի նահանգի օրինաստեղծ ողջ գործընթացն ու կիրառվող մեխանիզմներն ուսումնասիրել հենց խորհրդարանի ներսում՝ որպես աշխատակից: Հատկապես շատ կարևոր էին հանդիպումներըքաղաքական գործիչների, այդ թվում՝ նահանգապետի, պատգամավորների, քաղաքապետարանի և ընտրական գրասենյակի աշխատակիցների, ինչպես նաև Հավայի նահանգի դեմոկրատ և հանրապետական քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ: Առանձնահատուկ հետաքրքիր էր մեզ համար ուսումնասիրել, թե որքանով են քաղաքացիները, հասարակական կազմակերպություն-ները (շահույթ չհետապնդող կազմակերպություններ) և քաղաքացիական նախաձեռնություն-ները մասնակցություն ցուցաբերում օրենսդրական և քաղաքական գործընթացներին,ինչ մեխանիզմներ են կիրառում ազդեցություն գործելուայդ դաշտում, ինչպես են ֆոնդեր հայթայթում և այլն:

Այս առումով Հավայի նահանգի խորհրդարանը ողջ ԱՄՆ-ում իսկապես բացառիկ է իր թափանցիկությամբ և հասանելիությամբ: Քաղաքացիների հետ համագործակցության առանձին ստորաբաժանում է գործում, քաղաքացիները առանց որևէ դժվարության, անվտանգության ստուգումների կարող են մուտք գործել խորհրդարանի շենք, հանդիպել պատգամավորների հետ առանց որևէ նախնական պայմանավորվածության՝ ուղղակի վերջինիս գրասենյակ այցելելով, ելույթ ունենալ հանձնաժողովների լսումների ժամանակ և այլն:

Կրկնակի հաջողակ էինք նաև այն առումով, որ խորհրդարանում հատուկ նստաշրջան էր գումարվել հոկտեմբերին, ինչը շատ հազվադեպ է լինում՝ միայն որոշ բացառիկ հարցերի առկայության դեպքում: Հատուկ նստաշրջանի շնորհիվ կարողացանք գործնականորեն հետևել ողջ օրինաստեղծ գործընթացին՝ միևնույն ժամանակ ինքներս մասնակից լինելով քաղաքացիական նախաձեռնություններին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ մեր գործունեությունը չէր սահմանափակվում միայն խորհրդարա-նում մեզ կցված պատգամավորների հետ աշխատանքով: Օրինաստեղծ գործունեության արդյունքներն ու օրենքների կիրառումն ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրություններ իրականացնել նաև իշխանության այլ ճյուղերում: Այս առումով, ռագրի ընձեռած կարևորագույն հնարավորություններից մեկը տարբեր ոլորտների գործող պաշտոնյաների, մասնագետների հետ հանդիպումներն են: Ի դեպ, Հավայի նահանգում շատ հեշտ և ազատ է պայմանավորվածություններ ձեռք բերելու գործընթացը: Այս պայմանավորվածությունների հարցում ևս անգնահատելի էին պատգամավորների և նրանց աշխատակազմի ղեկավարների դերն ու ակտիվ ներգրավ-վածությունը: Նրանց շնորհիվ, ծրագրի ընթացքում գրեթե ամեն օր տեղի են ունեցել բազում հանդիպումներ և քննարկումներնաև դատական և գործադիր իշանությունների ներկայացուցիչների հետ: Այս հանդիպումների ընթացքում առավելապես գործնական գիտելիքներ ստացանք տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի կիրառման դժվարությունների ու փոփոխման արժանի հարցերի վերաբերյալ: Չնայած՝ այստեղ ևս տեղին է նշել Օրենսդրի այնպիսի թափանցի-կությամբ աշխատելու և տարբեր ոլորտներում ակտիվ ներգրավվածության մասին, որի արդյունքում բոլոր շահագրգիռ մարմինները ներկայացնում են հիմնախնդիրները՝ մինչև նստաշրջանները: Արդյունքում ստացվում է, որ Օրենսդիրը, նախապես տեղյակ լինելով տվյալ ոլորտի գործնական խնդիրներից և յուրահատկություններից, ստեղծում է առավելագույնս կիրառելի իրավական ակտեր: Ի դեպ, բնավ էլ պարտադիր չէ, որպեսզի նախապես

հայտարարվի լսումների օր կամ հատուկ ֆորմալիզացված նիստեր գումարվեն: Իշխանության այլ ճյուղերի ներկայացուցիչները կարող են ուղղակի էլեկտրոնային կամ հեռախոսային կապ հաստատել տվյալ ոլորտի պատասխանատու պատգամավորի հետ և իրենց փոքր խմբերով գալ քննարկան: Այս փոքր խմբերով քննարկումներն առավել արդյունավետ են դառնում ինչպես նյութը ներկայացնողների համար, այնպես էլ տվյալ պատգամավորի համար այլ խմբերի հետ նույնպես միևնույն տարակարծությունները քննարկելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագիրն իրենից ներկայացնում է գիտելիքների ու փորձի փոխանակման հնարավորություն, ուստի մենք, օգտվելով ընձեռնված հնարավորություններից, կազմակերպեցինք երկու ներկայացումներ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ: Ընտրվեցին Խորհրդարանը (որին մասնակցում էին պատգամավորներ, ներկայացուցչական պալատից պաշտոնյաներ, հրավիրված մասնագետներ և քաղաքացիներ) և Հոնոլուլուի մասնավոր ավագ դպրոցներից մեկը: Ներկայացվեց մեր հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը, ներքին և արտաքին քաղաքականությունը, պետական կառույցների և հասարակության միջև կապի յուրահատկություններն ու հնարավորությունները, արդարադատության համակարգն ու դատահիրավական բարեփոխումների ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև ավանդույթներն ու մշակութային արժեքները:

Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացումները, սակայն, այսքանով չավարտվեցին: Ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը կազմակերպում է նաև PFP ծրագրի մասնակիցների համաժողով, որտեղ այս տարի աշնանը ներկա էին առավել քան 240 ներկայացուցիչներ 50 երկրներից: Համաժողովի ընթացքում կազմակերպվեց նաև պաստառների ցուցահանդես-մրցույթ, որտեղ հայկական խումբը ներկայանում էր «Պետական կառույցներ-քաղաքացիական հասարակություն համագործակցություն» խորագրով թեմատիկ պաստառով: Պաստառը հիմնականում արտացոլում էր «Հանրային ցանցի» գործունեությունը և մասնակցությունը օրենսդրության մշակման գործընթացներին, ինչպես նաև մեր երկրում իրականացվող դատահիրավական բարեփոխումների համատեքստում նոր պրոբացիայի ծառայության հիմնադրման քաղաքականությունը, քրեական արդարադատության բարեփոխումները: Հպարտությամբ պետք է նշենք, որ մրցույթի ընթացքում հայկական խումբը գրավեց առաջին տեղը թափանցիկություն և հաշվետվողականություն կատեգորիայում:

Ինչ վերաբերում է հետագա անելիքներին, հատկանշական է, որ ծրագիրն ըստ էության նախ և առաջ փոխանակման ծրագիր է, ինչը ենթադրում է, որ ԱՄՆ-ի Պետքարտուղարության կողմից ֆինանսավորում ստանալու պարագայում մեր ամերիկացի գործընկերները կկարողանան փոխադարձ այց կատարել Հայաստան: Վերջինս իսկապես հիանալի հնարավորություն է շարունակել համագործակցությունը ու հայ գործընկերների և առավել լայն շրջանակների հետ կիսել ամերիկյան լավագույն փորձը և գործելակերպը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N---------- "-------- ----------2013.թ.

ՀՀ կառավարության աշխատակազմի

ղեկավար-նախարար

պարոն Վաչե Գաբրիելյանին

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի պատասխան Ձեր 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 02/12.9/18271-13 գրության հայտնում եմ, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը առաջարկել է բարձրագույն ուսումնական հաստատություններին իրենց կայք էջերում ավելացնել բուհի գործունեության տարեկան հաշվետվությունն (այդ թվում ֆինանսական հաշվետվությունները) ու ռազմավարական ծրագիրը (նշեմ, որ որոշ բուհերում դրանք արդեն իսկ տեղադրված են):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մշակվել է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգերը, որոնք ուղղված են բուհերի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը:

Հարգանքով՝

Արմեն Աշոտյան

Կատարող՝ Հ.Ազգալդյան
Հեռ. 52 56 62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 *Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358*
Էլ. փոստ՝ minister@minfin.am *Վեբ կայք՝ www.minfin.am*

_____№_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի ս.թ. նոյեմբերի 28-ի թիվ 02/12.9/18271-13 հանձնարարականի, ՀՀ ֆինանսների նախարարությունը քննարկել է մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները, ինչի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը:

Պետական ֆինանսական կառավարման վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության հետ կապված հարցերի վերաբերյալ.

Անհրաժեշտ վերլուծություններ կատարելու նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվում է պետական բյուջեի, պետական պարտքի և պետական ֆինանսական կառավարման այլ ոլորտների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակել Excel ֆայլով կամ նման այլ ձևաչափերով:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում ՀՀ կենտրոնական գանձապետարանի կողմից հրապարակվող տեղեկատվությունը հիմնականում Excel ձևաչափով է:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի մասով ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկատվությանը, ապա հայտնում ենք, որ այսուհետ այն նույնպես կներկայացվի Excel ձևաչափով:

Գնումների թափանցիկության և պետական գնումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հետ կապված հարցերի վերաբերյալ.

Հասարակական կազմակերպությունների կողմից առաջակվում է պետական գնումների համակարգի գործունեությունը դարձնել ավելի թափանցիկ և հնարավորություն ընձեռել պետական գնումների վերաբերյալ գնումների էլեկտրոնային համակարգից ագրեգացված տվյալները ստանալ ինտերնետի միջոցով (ըստ գնման տարբեր եղանակների, ըստ գերատեսչությունների և այլն):

Ներկայումս http://www.gnumner.am կայքի կառուցվածքը լրամշակման փուլում է, որի շրջանակում նախատեսված է նաև գնումների մասին տեղեկատվության ներկայացման և հրապարակման եղանակների բարելավում՝ օգտագործողի համար առավել մատչելի դարձնելու նպատակով: Արդյունքում առաջիկայում հնարավոր կլինի նաև տեղեկատվություն ստանալ ըստ պատվիրատուների, ըստ գնման եղանակների և այլն:

Միաժամանակ հայտնում ենք, որ կայքի վերափոխված տարբերակը նախատեսվում է շահագործման հանձնել 2014 թվականի առաջին եռամսյակի վերջին:

Պետական մարմինների կողմից ՔՀԿ-ներին ֆինանսավորման տրամադրման, ֆինանսավորված ծրագրերի մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի մշակման հետ կապված հարցերի վերաբերյալ.

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» հասարակական կազմակերպությունը առաջարկում է մշակել պետական մարմինների կողմից քաղաքացիական հասարակական կազմակերպություններին ֆինանսավորման տրամադրման, ինչպես նաև ֆինանսավորված ծրագրերի մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգ:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ պետական մարմինների կողմից ՔՀԿ-ներին ֆինանսավորման տրամադրման, ֆինանսավորված ծրագրերի մշտադիտարկման ու գնահատման միասնական համակարգի ներդրումը նախատեսվում է իրականացնել ծրագրային բյուջետավորման (արդյունքի վրա հիմնված) ներդրման բարեփոխումների շրջանակներում՝ ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներին զուգահեռ: Հայտնում ենք նաև, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն իսկ մշակվել և 2013 թվականի հոկտեմբեր ամսից շրջանառության մեջ է դրվել «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ

կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը նպատակ ունի նաև ապահովել ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը:

Գանգատարկման խորհրդում և հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովում դիտորդի կարգավիճակով մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցչության ապահովման հարցի վերաբերյալ.

«Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունն առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող միջգերատեսչական գանգատարկման խորհրդում և հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովում դիտորդի կարգավիճակով ապահովել մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացվածությունը:

Ներկայացված առաջարկությունը համարում ենք ընդունելի և գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող միջգերատեսչական գանգատարկման խորհրդում դիտորդի կարգավիճակով հասարակական կազմակերպությունների ներկայացվածությունը կարևոր քայլ կլինի խորհրդի գործունեության վերաբերյալ տեղեկացվածության ապահովման, ինչպես նաև խորհրդի գործունեության հրապարակայնության ու թափանցիկության աստիճանի բարձրացման գործում:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ցանկալի կլիներ ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող միջգերատեսչական գանգատարկման խորհրդում դիտորդի կարգավիճակով ապահովել միայն տվյալ բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայացվածությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Կապ.՝ Հարկային վարչարարության մեթ. բաժին
Հեռ.՝ (060) 700-328

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

_____N_____
Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013թ. նոյեմբերի 11-ի N 02/12.9/18271-13 հանձնարարականի՝ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունում ուսումնասիրվել են մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալությունը (ՊԱԳ) ներկայումս աշխատանքներ է իրականացնում Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելման և բուժման» ծրագրի շրջանակներում առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների, առանձին հիվանդությունների կանխարգելման, հայտնաբերման և ընթացիկ վերահսկմանն ուղղված միջոցառումների տվյալների վերաբերյալ տեղեկատվական կայքէջ ստեղծելու ուղղությամբ, որտեղ կտեղադրվեն նաև հանրության համար հասանելի տվյալներ և ցուցանիշներ:

ՀՀ կառավարություն ներկայացված ՊԱԳ-ի կարողությունների հզորացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել Պետական առողջապահական գործակալության կողմից հավաքագրվող տվյալների վերլուծական-հաշվետվական կայքէջ, որտեղ կնախատեսվեն նաև հասարակության համար հասանելի տվյալներ, վերլուծություններ:

Միաժամանակ, ներկայումս ՊԱԳ-ի կողմից ուսումնասիրվում են գործող օրենսդրական, իրավական ակտերի շրջանակներում հրապարակման ենթակա տվյալները ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ԱՆ աշխատակազմի
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյան
հեռ. 56 56 08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պրն Վ.Գաբրիելյանին

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 28.11.2013թ. N02/12.9/18271-13 հանձնարարականի՝ մի շարք ՀԿ-ների կողմից բարձրացված և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրավասություններին առնչվող առաջարկությունների վերաբերյալ հայտնում եմ.

1. *Առաջարկվում է ցանկացած հարկ վճարողի կողմից պաշտոնական պարզաբանումների տրամադրման, ինչպես նաև գանգատարկման դիմումները հարկ վճարողի կողմից համաձայնության դեպքում, տեղակայել հարկային մարմնի պաշտոնական կայքում՝ դիմումի մուտքագրման ամսաթվով և դրա վերաբերյալ հարկային մարմնի պատասխանով՝ պատասխանի ամսաթվով:*

Առաջարկության վերաբերյալ հայտնում ենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոնական պարզաբանումների մեկ օրինակը, դրանց ստորագրման օրվան հաջորդող երրորդ օրը, ուղարկվում է ՀՀ արդարադատության նախարարություն, որը «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» առաջիկա համարում ապահովում է դրա հրապարակումը: Միաժամանակ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվող պաշտոնական պարզաբանումները ևս հրապարակվում են ՊԵԿ պաշտոնական կայքում, քանի որ դրանք անհատական իրավական ակտեր չեն և չեն պարունակում որևէ հարկ վճարողի մասին անհատական տեղեկություններ:

Պաշտոնական պարզաբանումներ ստանալու համար դիմումների հրապարակման առումով հայտնում ենք, որ դրանք հարկային գաղտնիք պարունակող տեղեկություններ են, ուստի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն չի կարող դրանք հրապարակել:

Ինչ վերաբերվում է հարկ վճարողի դիմումի մուտքագրման ամսաթվով և դրա վերաբերյալ հարկային մարմնի պատասխանով հարկ վճարողի ցանկությամբ հրապարակմանը, ապա դա կարող է կատարել միայն հարկ վճարողն անձամբ, ի ցանկությամբ: Միաժամանակ, դիմումի ընթացքին հետևելու առումով ՀՀ կառավարության 04.03.2010թ. N198-Ն որոշմամբ հաստատված գործավարության

կարգով (69-րդ կետ) արդեն իսկ նախատեսված է, որ դիմումատուները դիմումներին տրված ընթացքին կարող են հետևել աշխատակազմի պաշտոնական կայքում նախատեսված առցանց նամակագրության համակարգով (առցանց համակարգ): Ընդ որում, առցանց համակարգով իրենց դիմումների ընթացքին կարող են հետևել նաև ոչ պետական կազմակերպությունները:

2. *Առաջարկվում է հարկային և մաքսային մարմին գանգատարկման հանձնաժողովում մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցչության ապահովումը դիտորդի կարգավիճակով, որը էական գործոն և երաշխիք հանդիսանալ հնարավոր կողմնակալ մոտեցումների բացառման, հանձնաժողովների աշխատանքների թափանցիկ և անաչառ մոտեցումների վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերին տեղեկատվություն ստանալու համար: Նշենք,*

Առաջարկության առումով նշենք, որ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 08.06.2008թ. «Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին» N07-Ն հրամանով հաստատված աշխատակարգի 20-րդ կետի համաձայն՝ գանգատարկման հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Դրանց կարող է մասնակցել ցանկացած անձ, այդ թվում՝ զանգվածային լրատվության ներկայացուցիչները, նախապես այդ մասին Գանգատարկման հանձնաժողովին տեղեկացնելով: Գանգատարկման հանձնաժողովի նիստերը կարող են լինել դռնփակ՝ դիմում-գանգատ ներկայացրած անձի գրավոր միջնորդության հիման վրա Գանգատարկման հանձնաժողովի նախագահի կայացրած որոշմամբ առևտրային կամ այլ (այդ թվում՝ հարկային) գաղտնիք պահպանելու անհրաժեշտության դեպքում:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցչության ապահովումը հանձնաժողովի աշխատանքներին պետք է կատարվի գանգատ բերող անձի համաձայնությամբ, քանի որ քննարկման ժամանակ ևս հրապարակվում են հարկային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

3. *Ինչ վերաբերվում է այն հարցադրմանը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը դիմում-բողոքները հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը գանգատարկման խորհուրդ է ուղարկում միայն չբավարարված կամ մասամբ բավարարված բողոքները, այն սահմանված է ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից բավարարված դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները ևս հրապարակվում են ՊԵԿ պաշտոնական կայքում:*

4. *Առաջարկվում է հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն իրականացնող հանձնաժողովի աշխատանքները թափանցիկ անցկացնելու համար դիտորդի կարգավիճակով ներգրավվել մասնագիտական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:*

Առաջարկությունը ընդունելի չէ, քանի որ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովում քննարկվում են հարկային և մաքսային ծառայողների՝ համապատասխան օրենքներով կարգավորվող և ծառայողական գաղտնիք պարունակող հարցեր, որոնց քննարկմանը մասնագիտական, հասարակական կազմակերպությունների մասնակցությունը նպատակահարմար չէ և միաժամանակ սահմանված չէ գործող օրենսդրությամբ:

Հարգանքով՝

Գ.Խաչատրյան

Հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության բաժին, 060544643